

2254

ԱՐՈԿԻ

ԼԵՆՏՆԸ

ՅԵՎ

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանից Հ. Լեպուշան



ՅԿ 24

! - 88

ՅԵՎԵԳԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ

1935 թ.

a p m.

3-1401a

03 JUN 2005

174 NOV 2009

3K 24

L-88

Վ. Ա. ԼՈՒՆԱԶԱՐՍԿԻ

ԼԵՆԻՆԸ
ՅԵՎ
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆՔ

Թարգմանեց Ա. Ե. Վ. Օ Ն Ց Յ Ա Ն



4826

Section 6

ԳԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

1935 P.

ՏԵՍԱԿԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

2254

Պատ. Խմբագիր՝ Ռ. Աթազան
Տեխ. Խմբագիր՝ Ա. ԽԱԶՎԱՆՔՅԱՆ
Սրբազրիչ՝ Լ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

Լեռինտկան, տեղարդի տպարան
Գլավլիստ № 80, ոյտովեր № 595
Հրատ. 3246, սիրտճ 3000



ՀԱՅՈԲԴԻ ԽՄՐԻ ԳՐՈՒՄԸ

Սարքսիզմ-լենինիզմը պրոլետարիատի՝ իբրև դասակարս զի՞ հայացքների միակ ու ամբողջ սկան սիստեմն ե, աշխարհայեցման գործությունն ու աշխարհիմացությունը։ Անելով մարդկության կուտակած գիտելիքների վողջ գումարից, բայց հիմնագրված լինելով բոլորովին նոր սկզբունքներով, վորոնք հնարավոր գարնան միմիայն նոր դասակարգի սոցիալական յուրահատուկ գրության հետեանքով, մարքսիզմ-լենինիզմը զիտական տեսակետից գերազանցում ե տարրեր եպօխաների ու դասակարգերի մարդկային մտքի բորոգա նախկին կառուցումները։ Մարքսիզմ-լենինիզմը հանդիսանում է միաժամանակ և բնության ու հասարակության փիլիսոփայական պատկերը, և իմացողության թեորիա, գիտական հետազոտության ընդհանուր մեթոդը, և միենույն ժամանակ այն ղեկավար ուղղունքների ս ստեմը, վորոնք դրված են պրոլետարիատի ծրագրի հիմքում, կապիտալիզմի տապալման և պրոլետարիատի ձեռքով նոր, սոցիալիստական հասարակության կառուցման ստրատեգիայի ու տակտիկայի հիմքում։

Պրոլետարական աշխարհայեցողությունը համարված է պարզ մարքսիզմ-լինիսիզմը տակավին ամբողջապես չի ընդգրկել վոզչ պրոլետարական մասսաների գիտակցությունը: Նա զենք և հանդիսական պրոլետարիատի ավելացարի ձեռքում, վորոն արտադիմում և նրան բուն շահերը, պրոլետարական կոմունիստական հայտում և նրան բուն շահերը, պրոլետարիատի սինդակադիմում միավորման՝ III Կոմունիստական Ինտերնացիոնալի ձեռքում:

Այս աշխարհայեցողության հիմք սկսումը, պոլ և լուրջ
զարգացումը տվել են Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Ենգելը ՀԻՀ դարի
յի ըստը կեսում։ Նրանք այն կոչել են «գիտական սոցիալիզմ»։
Կամ «դիմական մատերիալիզմ»։ Պրոլետարական աշխար-
հայեցողության մեծ հիմնադիրները յէլնում եյին ինչպես թեորի-
այի, այնպես ել անցյալի և նրանց ընջառապատզ ներկայի կեն-
դանի իրականության խորն օգուտնամիջությունից։ Ինչպես
Անդին եք զրում, «Մարքսը շարունակում ու հանձարեղ ա-



1542-87

վարտողը հանդիսացավ ՀԻԽ դարի յեզեք զլիսավոր գաղաւա-
փարական ճուանքների, վորոնք պատկանում երին մարդկու-
թյան յերեք ամենից ավելի առաջավոր յերկրներին—գելաւ-
նական կլասիկ վիլիսոփայության, անգլիական կլասիկ քաղա-
քատնտեսության և ֆրանսիական սոցիալիզմի՝ առհասարակ-
քրանսիական հեղափոխական ուսմունքների՝ առնչությամբ¹:

Բուրժուական քաղաքատնտեսության, ուսուպիտիտն սոցիա-
լիզմի բարձրագույն ձեռքի, ԽՎԱ դարի բուրժուական փիլիսոփա-
ների մարտական մատերիալիզմի, ԽԻԽ դարասկը ի կերպանական
մտածողների, հատկապես Հեգելի իդեալիստական դիալեկտիկայի
ակնդետ ուսումնասիրությունը Մարքսի և Ենգելսի մոտ միանում
եր նրանց ժամանակակից սոցիալական իրականության ըոլոր
ձեռքի հանրակողմանի վերլուծության, պրոլետարիատի տակա-
վին յերիտասարդ շարժման պրակտիկայի հիմնափրաման, ԽՎԱ ու
ԽԻԽ դարերի բուրժուական հեղափոխությունների փորձի և 1848-
թվի ու Կոմունայի ժամանակավա պրոլետարական հեղաշրջումների
առաջին փորձերի հաշվառման հետ:

Ներկայումս, սակայն, արդեն խոսք անգամ չի կարող լինել
վորևէ իսկական մարքսիզմի մասին՝ լենինիզմից դուրս։ Լենի-
նիզմը հանդիսացավ Մարքսի և Ենգելսի գործի շարունակումը՝ հիմք
ունենալով կապիտալիզմի հետագա զարգացման հաշվառումը մինչեւ-
նրա նեխման եպոխան—իմպերիալիզմը, պրոլետարիատի հե-
տագա զարգացման հաշվառումը մինչեւ 1917 թվի Հոկտեմբեր-
յան մեծ հեղափոխությունը, և վերջին տարիների սոցի-
ալիստական շինարարության փորձի հաշվառումը։ Չի կարելի
լենինյան լինել առանց մարքսիստ լինելու. այդ ինքնին հասկա-
նալի յե, վորովինետու լենինի և նրա կուսակցության վորչ թեո-
րիան ու պրակտիկան հիմնվում են մարքսիզմի վրա։ Բայց նմա-
նապես չի կարելի ներկայումս մարքսիստ լինել, առանց լե-
նինյան լինելու, վորովինետու լենինիզմը Մարքսի ուսմունքի բնա-
կան և անհրաժեշտ ստագիան եւ Ըստ Ստալինի բնորոշման, Շի-
նինիզմը իմակերթալիզմի և պրոլետարական հեղափոխության հ-
պոխայի մարքսիզմն եւ Ավելի ճիշտ՝ լենինիզմն ընդհանրապես
պրոլետարական հեղափոխության թեորիան եւ ու տակտիկան,
մատնավրապես պրոլետարիատի դիկտատուրայի թեորիան ու
տակտիկան։ Մարքսը և Ենգելսը գործել են նախահեղափոխական
շրջանում (մենք նկատի ունենք պրոլետարական հեղափոխությու-

1 Լենին. Յերկերի ժառավածու հ. ԽՎԱ, եջ 8, «Կարլ Մարքս» հոդված։
Այսուղ և հետազոտում մեջբերությունները կատարված են ըստ լենինի յերկերի
Յ-ը բառարակության այն ընդգծությունը (Յիտառների մեջ), վերաբերեա
առանձին վերտպահում չկա, ամենուրեք պատկանում են լենինին։

նը), յերբ դեռևս չկար զարգացած իմպերիալիզմ, պրոլետարքների
հեղափոխության պատրաստվելու շրջանում, այն շրջանում, յերբ
ողորեատարական հեղափոխությունը տակավին ուղղակի գործնա-
կան անխուսափելիություն չեր հանդիսանում։ Իսկ Մարքսի և
Ենգելսի աշակերտ Լենինը գործեց զարգացած իմպերիալիզմի
շրջանում, ծավալվող պրոլետարական հեղափոխության շրջանում,
յերբ պրոլետարական հեղափոխությունն արդեն հաղթանակել եր
մի յերկրում, ջախջախի եր բուրժուական դեմքրատիան և բաց
եր արել պրոլետարական դեմոկրատիայի երան, խորհուրդների
երան։ Այս թե ինչու լենինիզմը մարքսիզմի հետագա զարգա-
ցումն և հանդիսանում։¹

Մարքսիզմն առանց լենինիզմի անհնար և Ամեն տիպի
մենշևիկյան մարքսիզմը, և Ինտերնացիոնալի մարքսիզմը, կեղծ
մարքսիզմը եւ Այդ աշխարհայեցողությունը մեռած եւ քայլայ-
վում եւ մեր աչքի առաջ, վերածվելով քիչ թե շատ ձարակորեն
նախշած դեկորացիայի, վարի հետեւում տեղի յե ունենում պրո-
լետարիատի այլառերումը և պոլիտիկանական իրարանցում և
բարձրացվում, վորի նպատակն եւ խեղաթյուրել բանվոր զասա-
կարգի ինքնուրույն գարգացումը և նրան յենթարկել շնագոր-
ծողների գաղափարական աղղեցությանը։ Ըենինիզմն աճեց և
ամրացավ, գոտեմարտելով և Ինտերնացիոնալի ոպրոդառնիզմի
հետ, վորի գեմ պայքարը հանդիսացավ և հանդիսանում եւ կա-
պիտալիզմի գեմ պայքարելու անհրաժեշտ նախապայմանը։²

Փորձեր են յեղել—այդպիսիք արել եւ, որինակ, Ա. Մ. Դե-
րբրինի խումբը—մարքսիզմի և լենինիզմի փոխհարերությու-
նը պատկերացնել այն իմաստով, վոր իրը թե մարքսիզմն իրե-
նից ներկայացնում և պրոլետարիատի ալարտված բեռքան, իսկ
լենինիզմը՝ նրա պրակտիկան, վերանորոգված և հարմարեցված
մեր ժամանակներին։ Այս հայացքը պետք եւ դատապարտել ամե-
նայն վճռականությամբ, իրեւ մենշևիկացող, գիտակցաբար կամ
անդիտակցաբար կատարվող փորձ՝ նսիմացնելու լենինիզմի նշա-
նակությունը և դրանով իսկ խեղաթյուրելու վորչ մարքսիզմը։
Լենինիզմը վոչ միայն պրոլետարական ուեալ հեղափոխության
ժամանակին հարմարեցված պրակտիկա էւ հանդիսանում, այլև
պրոլետարական թեորիայի զարգացման նոր փուլ, վորը խորա-
պես հավատարիմ և մնացել իր սկզբունքներին և ծավալվել և
նոր փորձի առնչությամբ։

1 Ի. ՕՏԱԼԻՆ. Լենինիզմի հիմունքների մասին։ 1924 թ. ապրիլի սկզբ-
ներին Սվերդլովսկի համալսարանում կարգացած դասախոսությունները («Լենի-
նիզմի հարցերը», 9-րդ հրատ., Մ. կուսիրա, 1932 թ. եջ 6)։

2 Նույն տեղում։

Սերբեմն, չժխտելով լենինիզմի առաջնակարգ նշանակությունը քաղաքականության, քաղաքատնտեսության պատմության, հիմնական սկզբունքները և մանափառության պահպան պահպան կայի բնագավառում, փորձում են ապացուցել, թե լենինիզմը վոչ մի առանձնապես արժեքավոր բան չի մուծում փրկիսովառության բնագավառը։ Այս տիպի տեսաբանները փորձում են Մարքսու ենքելսի կողքին դել Գ. Վ. Պլեխանովին և սիրալիք գովաստի խոսքերով անցկենալ վ. Ի. Լենինի փիլիսոփայական աշխատությունների մոտով։ Իրերի նկատմամբ այդ միանդամայն սխալ և խորապես վնասակար հայացքը պիտք ե հերքել ամենայն խստությամբ։ Պաշտպանելով Մարքսի մատերիոլիզմն այսպես կոչված պողիտիվիզմի (Ե. Մախ, Ռ. Ավենարիուս և ուրիշներ) ամեն տեսակ խորամանկ, լավը ուն և վորորապտույտ սիստեմներից, Լենինը «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ ծավալեց հայացքների ամենահարուստ մի սիստեմ, վորը պրոլետարիատի փիլիսոփայության ինչպես մատերիալիստական, այնպես եղ դիալեկտիկական կողմի եյությունը պարզութանելու տեսակետից ամենաարժեքավոր մուծանք ե հանդիսանում մարքսիստական մտքի գանձարանում։ Առանց այդ գրքի ամենառաջադիր ուսումնասիրության, անկարելի յե կրթված մարքսիստ լինել։ Լենինը չափարտեց մյուս փիլիսոփայական յերկերը, բայց նրա սեագիր տեսրակներում մնացել են Հեգելի յերկերի բազմաթիվ կանոպեկտներ և մի ամբողջ շարք զանազան փիլիսոփայական պրոլեմների վերաբերյալ դիտողություններ, գորո՞ք իրենցից ներկայացնում են պրոլետարական փիլիսոփայական մտքի նույնքան թանգարժեք մարդարիտներ, վորքան, որինակ, Մարքսի աֆորիզմները Ֆեյերբախի մասին։ Այսուղ յուրաքանչյուր տող և յուրաքանչյուր բառ պետք ե ուշագրությամբ ուսումնասիրվեն, վորպեսզի այս հակիրճ, բայց հարստագույն ժառանգության մեջ պարունակվող գետերմինատները կարողանան ամբողջապես ոգտագործվել իրեւ զեկավար ուղի իշներ պրոլետարիատի հետագա փիլիսոփայական աշխատանքում։

Խաղնին հասկանալի յե, վոր Լենինի հիմնավորած՝ ժարք-
սիզմի ընդհանուր փիլիսոփայական սկզբունքները հիմնադրա-
կան նշանակություն ունեն նաև գրականագիտության համար՝
իրեւ պրոլետարական գիտության ճյուղերից մեկի։ Այս հատուկ
նպատակի համար Լենինի փիլիսոփայական ժառանգությունն
ուժագործելու հետ մեկտեղ անհրաժեշտ ե այդ հատուկ տեսան-
կյունով ամենաուշագրի կերպով ուսումնասիրել նաև լենինիզմի
նաև արտակարգ գիտական սկզբունքներն ու տվյալները։ Ընդ վո-
րում հատուկ նշանակություն ունի Լենինի ուսմունքը կուլտու-

բայի մասին, անցյալի կուլտուրայի ու պրոլետարական կուլտուրայի փոխաբերության և պրո ետարիատի կուլտուրական խնդիրներ մսափն մեր յերկրության գրականությունը չի կարող ուսումնառվագրվել հասարակության պատմությունն ու իրեն՝ գրականության պատմությունից զուրս: Լենինի ժառանգության միջ կան թանգարական գործություններ, վորոնք բ սցանայտում են մեր յերկրի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական պատմության ներքին իմաստը, առանց վորոր հասկանալու անշարժելի յե վոչ գիտենալ գրականության անցյալը, վոչ ել պատմականորեն իմաստագորել նրա ներկան և ապագան: Գրականագիտութան համար մեկնաբանելու տեսանկյունով լենինի վողջ վիթխարի ժառանգության շարադրումն ու մեկնաբանումը, ինքնին հասկանալի յե, չի կարող սպառվել ներկա բրոյշուրով. զա հատուկ հետազոտությունների, ավելի ճիշտ՝ կ լեկտիվ հետազոտությունների գործն ե: Այստեղ մենք կրագականանանք լենինիդմի սեղմ ակնարկով հետեյալ բաժինների վերաբերյալ. 1) լենինի փիլիսոփայական ժառանգությունը, 2) նրա ուսմունքը կուլտուրայի մասին, 3) իմպերիալիզմի թևորիան, 4) Արեգուտքի և մեր յերկրի զարգացման հիմնական ուղիների վերաբերյալ ուսմունքը, 5) լենինի առանձին աշխատությունները, վորոնք այս կամ այն չափով նվիրված են գրական յերեգույթների մեկնաբանմանը, 6) նրա առանձին, գրականության բագավառին վերաբերյալ դիտողություններն ու արտահայտությունները, վորոնք չեն մտել նրա յերերի միջ, բայց պահպանվել են ժամանակակիցների հիշողություններում, և վերջապես 7) լենինը և ժամանակակից մարքսիստական գրականագիտության պր բ մենիքը:

2. ԱԵՆԻՆԻ ՓԻԼԻՈՈՓԱՅԱԿԱՆ ՀԱՅԱՅԻՆԵՐԸ

Ієнінյаин мієтпідьї амбінсаарніроп զիծը — թեнріяжї և պրасկотի-
важї միասնությունը — հատկապիս ցուցանշական և Խնտերնացիո-
ւալիս սոցիալ — գետուկրատուերի գործունեյության փոնի վրա, գործոնց
և որդիան ավելի բան չե, քան ֆրազեոլոգիա, վորը կոչված և
իմակավորելու նրանց պրակտիկայի սոցիալական անրերի հու-
յունն ու դավաճանությունը ։ Ճեսական գաղափարի (խմացողու-
յան) և պրակտիկա, ի միասնություն — այս և այս միասնու-
յունն ե հեց իմացողության թեօրիայում։ Իենինի այս ուշա-
րավ փիլիսոփայական Փրագմենտը վկայում և այն մասին, զոր-
ուն իմացողության թեորիան ՝ կազմիր իլլիչը հասկանում եր-
յդ թեորիայի մեջ մտնող պրակտիկայից անբաժան։ Ամեն մի-
եռքի նա անդուլ ստուգում եր պրակտիկայով, և պատահ-

կան չե, վոր «Բոլշևիկները կրպահեն արդյոք պետական իշխանությունը» բրոցյուրի յերկրորդ հրատարակություն առաջարկանում նա գոհունակությամբ զրում եր. «Սույն բրոցյուրը զրված է... 1917 թվի սեպտեմբերի վերջերին և ավարտված հոկտեմբերի 14 (1)-ին, Նոյեմբեր 25-ի (հոկ. 25-ի) հեղափոխությունը սույն բրոցյուրում դրված հարցը թեորիայի բնագավառից փոխադրեց պրակտիկայի բնագավառը: Այժմ վոչ թե խոսքով, այլ գործով պետք ե պատճառախանել այս հարցին... Խնդիրն այժմ այն ե, վոր առաջավոր դասակարգի՝ պրոլետարիատի՝ պրակտիկայով ապացուցվի բանվորական և գյուղացիական կառավարության կենսունակությունը... Դեպի աշխատանք, բոլորդ դեպի աշխատանք, համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գործը լւետք ե հաղթանակիւ և կհաղթանակիւ¹: Այսուել լենինը խոսում ե այն մասին, թե այժմ ժամանակ չունի զատովություններ անելու հեղափոխության վերաբերյալ, թե ավելի հետաքրքրական ե հեղափոխությունները կատարել, քան թե նրանց մասին զբեկարաց նա, գրութ եր նրա համար, վորպեսզի կատարեր: Այն ասացվածքը, թե մարքսիզմը գործածի, այլ գործողության ղեկավարությունը, լենինի ամենասիրած ասացվածքներից մեկն եր: Այն, իհարկե, վոչ մի կերպ չի վերաբերում Ա Խնտերնացիոնալի տեսական արտադրանքին, վորն ամբողջապես նպատակ ուներ ուժորմիստական շաղալլատությանը պրոլետարիատին զրկել գործելու հնարավորությունից:

Բայց այս ասացվածքը և ինձ չափով բնորոշ ե լենինիզմի, այդ «իմպերիալիզմի և պրոլետարական հաղափոխությունների դարաշրջանի մարքսիզմի» համար, յերբ կապիտալիզմի դեմ դասակարգային ակտիվ պայքարի յեն ներգրավվել միջազգային պրոլետարիատի աւանյակ միլիոնները, յերբ պրոլետարիատն արդին հաղթանակել ե յերկրագնդի մեկ զեցերորդ դական մասում և կապիտալիստական կարգերի դեմ վճռական գոտեմարտերի շրջանն ե թեակոմել մնացած հինգ զեցերորդական մասում:

իր «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» յերկում («Քնն-նադատական դիտողություններ մի ռեակցիոն փիլիսոփայության՝ մասին») լենինն իր հանճարի ամբողջ ուժգնությամբ զուրս յեկավ՝ պաշտպանելու մատերիալիզմը։ Նա ինքը մատնանշեց խնդիրների՝ այն տարբերությունը, վոր կա այդ հետազոտության և Մարքսի ու Ենգելսի փիլիսոփայական յերկերի միջև՝ յելակետացին տեսակետների և ընդհանուր առմամբ զողջ աշխարհայիցողության վիճակատար միասնությամբ հանդերձ։ Մարքսն ու Ենգելսն իրենց փիլիսոփայական աշխատությունների և դիտողությունների մեջ

Մատերիալիզմի բուն եյությունը բնորոշելու համար հարուստ մեջբուռներ և կատարում ենդեմի «Եյութվիկ Ֆեյերախ» աշխատություննեց. «Այն իրային (stofflich) աշխարհը, վորը մենք

Հնդունում ենք սեր զգայաց ոններով և վորին պատկանում ենք մենք ինքներս, միակ իրական աշխարհն են, և մեր զիտակցությունը և մատածողությունը, ինչքան ել նրանք զերզգայական թվան, հանդիսանում են առարկայական, մարմնական ու գանձի, ու զեղի արդյունքը (Erzeugnis): Նյութը փողու արդյունք չե, այլ վողին և լոկ նյութի բարձրագույն արդյունքը: Այս, ինարկեղու մատերիալիզմ են¹:

Մատերիալիզմը, ինչպես ընդգծում է Լենինը, ուղղակի հերքում և յերեվույթի հակադրումն է ըին: «Սմօն մի խորհրդագույր, իմաստակային, խորամանկամիտ տարբերությունը յերեվույթի և ոխնչնին իրի» միջև համատարած փիլիսոփայական տիմաբություն է: Իրականում յուրաքանչյուր մարդ միլիոն անդամ նկատել և «ինքնին իրի» պարզ ու ակնհայտ փոխարկումը յերեվույթի, յերբ ինքնին իրը գառնում և «իր մեզ համար»: Այդ փոխարկումն ել հենց իմացողությունն են²:

Ամեն մի իմացողության աղբյուր կարող են լինել միայն զգայությունները, բայց այսակեցից գնում ե յեղի—մեկը ճիշտ, մյուսը սխալը՝ իմացողության թեորիայի առաջին դրյալը, անկատած, այս ե, վոր մեր զիտելիիքների միակ աղբյուրը զգայություններն են: Ընդունելով այդ առաջին դրյալը, Մախը խճառու և յերկրորդ կարենքոր դրյալը—այս որյեկտիվ ունալություն վերաբերյալ, վորը տրված ե մարդուն նրա զգայությունների մեջ կատ հանդիսանում ե մարդկային զգայությունների աղբյուրը: Յելնելով կայություններից, կարելի յե գնալ սուրյեկտիվիզմի գծով, վորը հասցնում է սոլիպսիզմի («մարմինները զգայությունները կոմպլեքսները կամ համակցություններն են»), և կարելի յե գնալ որեկտիվիզմի գծով, վորը հասցնում է մատերիալիզմի (զգայությունները մարմինների, արտաքին աշխարհի պատկերներն են): Առաջին տեսակետի՝ աշնուստիցիզմի կամ, քիչ ավելի հետու, սուրյեկտիվ իգեալիզմի համար որյեկտիվ ճշմարտություն լինել չի կարող: Յերկրորդ տեսակետի, այսինքն մատերիալիզմի համար հյական և որյեկտիվ ճշմարտության ճանաչումը³:

Մատերիալիզմի հիմք են հանդիսանում, այսպիսով, հետեւյալ դրույթները—Գոյություն ունի որեկտիվ աշխարհ, իր հիմքում նա մեկ է: Պա իր վողջ անսահման բազմազանությամբ հանդերձ

¹ Լենին. «Մատերիալիզմի հմագիրուկրիտիզմ»: Քննադատական դիտություններ մի հետազիմական փիլիսոփայության մասին: (Յերկ. ժաղով, Տ. XIII, եջ, 71):

² Նույն ուղղում, եջ՝ 97:

³ Նույն անդում, եջ՝ 103:

մեկ մատերիան է: Ամեն մի մարդ այդ աշխարհի մասն է կազմում: Երա զիտակցությունը, ինչպես և առհասարսկ զիտակցությունը, բարձր կազմակերպված մատերիայի հատկությունն են: Մարդու զիտակցությունը անդրադարձնում է շրջապատող աշխարհի իրական իրերը և նրանց փոխարարական ները: Նա անգրադարձնում է լոկ մոտավորապես, բայց այդ մոտավորությունը գնալով շարունակ ավելի ճշգրիտ ե դառնում: Լենինը գրում ե այդ առթիվ: «Մատերիալիզմի համար աշխարհն ավելի հարուստ, ավելի կենդանի, ավելի բազմազան ե, քան այդ թվում: Ի (այօինքն ներկայանում ե մեր զիտակցությունը նրա զարգացման տվյալ հատվածում—Ա. Լ.), վորովնետեվ գիտության զարգացման յուրաքանչյուր քայլ նրա մեջ նոր կողմեր ե բաց առաւելում»⁴:

Ինչպես ասացինք արդեն, Լենինի գլխավոր փիլիսոփայական յերկի հիմնական խնդիրն եր մատերիալիզմի պաշտպանությունը նրա անսասան հիմքերը փորելու ձգտող ավեն մի քողարկված իգեալիզմից: Լենինը հսկայական նշանակություն եր տալիս հենց Մարքսի մատերիալիզմի դիտակտիկան ելությանը: Մատերիան լենինի համար ինչ վոր իներտ բան չե, վոր ինքնին անշարժ ե, վորը կարիք և զգում զրսի խթանի, ինչ վոր աննյութական շարժման, ուժի, կամ եներգիայի նմանապես այդ շարժումը ևս լենինի համար ամեններին լոկ մեխանիկական տեղափոխություն չե տարածության մեջ խթանի, դիմադրության, վանման և այլ միջոցով, ինչպես այդ յենթագրում եյին մեխանիստական մատերիալիստները: Լենինի համար մատերիան և շարժումը միավոր են: Դիտակտիկական մատերիալիզմի մատերիան ինչ վոր զարգացող բան ե և նրա շարժում ասելով հասկացվում են նրա բոլոր անսահման բազմապիսի փոփոխությունները: Փոփոխումը՝ յուրահատուկ ե մատերիային վորպես այդպիսին: ԱՄատերիան յերեքը և վոչ մի տեղ չի կարող անփոփոխելի լինել: Ամեն մի մատերիալ գոյություն գտնվում է փոփոխման պրոցեսում, ընդ վորում՝ այդ պրոցեսը միշտ ունի յերկատվելու, տվյալ՝ ամրոգիչը հակասական մասերի բաժանվելու բնույթ: «Միանականի յերկատումը և նրա հակասական մասերի իմացությունը.. զիտակտիկայի եռթյուն են և («եռթյուններից մեկը, հիսնական առանձնահատկություններից կամ գերեց մեկը, յեթե վոչ հիմնականը»):⁵

«Հակադրություններին ուղյուղությունը, շարունակում է լենինը... հանաջումն ե. . հակասական, իրացամեմեծ, հակադիր տենդենցների բնության (այդ թվում նաև վողու ու հասարակության) բոլոր

⁴ Նույն անդում, եջ՝ 105:

⁵ XII Պոնինեցի սборник «Կ զարք, օ ձավուտիկ», стр. 323.

յերեվույթների և պրոցեսների մեջ։ Աշխարհի բոլոր պրոցեսների իմացողության պայմանը նրանց փինքնառման, նրանց ինքնարերական դարձացման մեջ, նրանց կենդանի կյանքում—նրանց իմացողությունն եւ իբրև հակադրությունների միասնություն։ Զարգացումը հակադրությունների «պայքարն եւ»:¹

Սահմանելով այս զիթխարի կարեվորություն ունեցող ընդ-
հանուր սկզբունքներն իր «Դիմալեկտիկայի հարցի շուրջը» գի-
տողությունների մեջ, Լենինը հատկապես ընդգծում է յիշելու պատկերացումը զարգացման մասին.—

«Զարգացման (եվոլյուցիայի) յերկու հիմնական... կոնցեպ-
ցիաներն են՝ զարգացումը վորպես նվազում և ավելացում,
վորպես կրկնություն, և զարգացումը՝ վորպես հակադրություն-
ների միասնություն (միասնականի յերկատումն իրարամերժ հա-
կադրությունների և նրանց փոխարարերությունը): Շարժման
առաջին կոնցեպցիայի դեպքում ստվերի մեջ և մնում ինքնաշար-
ժումը, նրա ռարժի ուժը, նրա աղբյուրը, նրա դրդապատճառը
(կամ այս աղբյուրը փոխադրվում ե դաւար—աստված, սուրբեկա-
տե.): Յերկրորդ կոնցեպցիայի դեպքում գլխավոր ուշադրությունն
ուղղված է հենց «ինենաօւժման» տղբյուրի իմացողության վրա՝
Առաջին կոնցեպցիան մեռած ե, խղճուկ, չոր: Յերկրորդը՝ կեն-
սունակի: Միայն յերկրորդը տալիս ե ամեն եյականի «ինքնաշարժ-
ման» բանալին, միայն նա տալիս ե «թոփչքնների», «աստիճանա-
կանության ընդհատման», «հակադրությանը վերածվելու», նի
վոչչացման և նորի ծագման բանալին»^{3:}

Նույն դիտողությունների մեջ կենինը տալիս ե ընդհանրապես դիալեկտիկայի և զորեւ առանձին յերեվույթի դիալեկտիկայի շարադրման մեթոդի վերաբերյալ ցուցումներ։ Այդ հանձարեղ տողերն անհրաժեշտ ե այստեղ բերել ամբողջապես և Ա. սուբեկտիվիզմի (սկեպտիցիզմի և սովիսոտականության և այլն) տարբերությունը գիտակտիկայից, ի միջի այլոց, այն և, զոր (որեկտիվ) դիալեկտիկայի մեջ հարաբերական (ուելատիվ) և նաև տարբերությունը ուլատիվի և բացարձակի միջև։ Ոքեկտիվ դիալեկտիկայի համար ուլատիվի մեջ կտաքարձակը։ Սուբեկտիվիզմի և սովիսոտականության համար ուլատիվը լոկ ուլատիվ և և բացասում և բացարձակը։ Մարքսի մոտ էկապիտալումնախ վերլուծվում և բուրժուական (ապրանքային) համարակության ամենապարզ, սովորական, հիմնական,

ամենից հաճախաղեպ, ամենից առողջա, միկրոդ անգամ հասպիզող հարաբերությունը—ապրանքների փոխանակությունը: Վերլուծությունն այս պարզագույն յերեվոյթի մեջ (բուրժուական հասարակության այս օրջիջիւ մեջ) բաց և անում ժամանակակից հասարակության բոլոր հակասությունները (բայց հակասությունների respective սաղմը): Հիտագա շարադրումը մեզ ցույց ե տալիս այդ հակասությունների և այդ հասարակության զարգացումը (թե աճումն ու թե շարժումը) նրա առանձին մասերի շուրջ, նրա սկզբից մինչև նրա վերջը: Այդպիսին պետք ե լինի նաև ընդհանրապես դիալեկտիկայի շարադրման (respective ռւակության դիալեկտիկան Մարքսի մոտ դիալեկտիկայի սոսկ մասնակի գեղքն ե): Սկսել ամենապարզէց, սովորականից, հաճախաղակից եց, ծառի, կանաչի վորևե տերեի առաջարկումից. խաղեպից եց, ծառի, կանաչի վորևե տերեի առաջարկումից. իվանը մարդ ե. Ժուչկան շուն և և այլն: Այստեղ արդեն (ինչպես հանճարեղ կերպով նկատել ե Հեղեղը) կա դիալեկտիկա. առանձիններն անանանան ե... նշանակում ե, հակադրությունները (առանձինը հակադրի և ընդհանուրին) նույնական են. առանձինը գոյություն չունի այլ կերպ, յեթե վոչ այն առնչությամբ, վորը տանում ե դեպի ընդհանուրը: Ընդհանուրը գոյություն ունի միայն առանձինի մեջ, առանձինի միջացով: Ամեն մի առանձինը (այսպիս թե այնպիս) ընդհանուր ե: Ամեն մի ընդհանուրը առանձինի մասնիկն ե (կամ կողմը կամ եյությունը): Ամեն մի ընդհանուրը լոկ մոտավորապես և ընդդրկում բոլոր առանձին առարկաները: Ամեն մի առանձինը վոչ լրիվ ե մտնում ընդհանուրի մեջ, և այլն, և այլն: Ամեն մի առանձինը հազարավոր անցումներով ե կապված այլ տեսակի առանձինների (իրերի, յերեղով յթքով և կապված այլ տեսակի առանձինների) հետ ևայլն:

Ապրիլ, պրոցեսում է առաջ այս ձեվակերպումների փիլիսոփայական գործը՝
թյունը վոչ մի կասկածի յենթակա չեւ բայց նրանք ունեն վոչ
միայն ընդհանուր փիլիսոփայական, այլև հատուկ զրականա-
կիտական նշանակություն։ «Ընդհանուրի» և ամասնակիր» միաս-
կիտական պահանջման գնել համաձայն զրական գիտության այնպի-
սի կարեվոր կատեգորիաների, ինչպիսին են վոճը կամ ժանրը,
այդ պարտավոր և այսուհետև յուրաքանչյուր մարքսիստ զրա-
կանակետ։ «Հակագրությունների միասնության» պրոբլեմը գնել
համաձայն այս կամ այն զրողի ստեղծագործության—նշանակում ե
պարզել այդ ստեղծագործության ներքին հակասությունները և
նրանց ներսում գորշել առաջատար, կազմակերպիչ սկզբունքը

І. ХІІІ. Денанський зборник, стр. 321-35.

մաղթստական կամ մեխանիստական աքստրակցիանի վտանգը
Բայց յայդ խեղաթյուրումները, վորոնք, զժբախտաբար, սակավու-
գեպ չեն ժամանակակից զրականագիտության մեջ, մեղ պարա-
փոքցնում են հանրակողմանիորեն և խորապես ուսումնամիբելու
լինինյան փիլիսոփայական ֆրազմենտները, վորոնք անհրա-
ժեշտ են գրական պրոցեսի դիալեկտիկայի կառուցման համար:

Ենդելոի այն ուսմունքին, թե մարդկությունն ասս ինանա-
բար տիրապետում ե ճշմարտությանը, կենինը չափազանց մեծ
նշանակություն եր տալիս Այդ ուսմունքը, վաղիմիր և լիչի
կարծիքով, ցայտուն սահմանաբաժան գիծ և անցկացնում, մեկ
կողմից քարացած զոգմատիզմի, մյուս կողմից՝ ճշմար-
տությունը ժիւտող ռեկարտիզմի միջև։ Քանի վոր կենինի մատե-
րիալիզմի (ուրեմն և դիտակից պրոլետարիատի մատերիալիզմի) այս
հակիրճ շարադրումը մենք այստեղ տալիս ենք իրեն հենարան
մարքսինինյան գրականագիտության կառուցման մեթոդների
և երաբերյալ յեզրակացությունների համար, մենք նպատակահար-
մար ենք համարում կենինից հետո այստեղ ամբողջապես բերել են-
գելուի այս կարեվոր մաքերը։ — «Մատանողության գերիշխանական ու-
թյանն իրագործվում է չափազանց անզերիշխանորեն մտածող մի
շարք մարդկանց մեջ, իմացությունը, — վորն անպայման ճշմարտու-
թյան իրավունք ունի, .մի շարք հարաբերական (ռելատիվ) մոլո-
րությունների մեջ և. վոչ մեկը, վոչ մյուսը (վոչ բացարձակ և շ-
մարիտ իմացողությունը, վոչ ել գերիշխանական, մտածողու-
թյունը — Ա. Լ.) չի կարող ամբողջապես իրագործվել այլ կերպ,
յեթե վոչ մարդկության կյանքի անսահման տեսականության գեղ-
քում։ Մենք այստեղ դարձյալ ունենք այն հակասությունը, վո-
րին արդեն հանդիպեցինք վերելում, հակասություն՝ անհրաժեշ-
տության չափով մեղ իրեն բացարձակ ներկայացող մարդկային
մտածողության բնույթի և լոկ սահմանափակ կերպով մտածող
առանձին մարդկանց մեջ նրա իրագործման միջև։ Այս հակասու-
թյունը կարող և լուծվել միմիայն հաջորդական մարդկային սե-
րունգների այնպիսի մի շարանում, վորը մեղ համար, առնվազն,
գործնականում անսահման և։ Այս իմաստով մարդկային մտածո-
ղությունը նոյնքան գերիշխանական և, վորքան անզերիշխանա-
կան, և նրա իմացունակությունը նոյնքան անսահմանափակ և,
վորքան սահմանափակ։ Գերիշխանական և անսահմանափակ իր
բնույթով (կամ կառուցվածքով Anlage), կոչումով, հնարավո-

րությումը, պատմական վերջնանպատակով։ անգերիշխանական և
սահմանափակ՝ իր առանձին իրագործումով, այս կամ այն ժա-
մանակվա տվյալ իրականությամբ։¹

«Պատմականորեն պայմանական են, — ավելացնում ե գրան
ինը կենինը, — նկարի ուրվագծերը, բայց անպայմանական ե
այն, վոր այդ նկարն ոբեկտիվորեն գոյություն ունեցող մողելն
ե պատկերում։ Պատմականորեն պայմանական ե այն, թե յերբ
և վորպիսի պայմաններում մենք իրերի եյության, մեր իմացուու-
թյան մեջ հասել ենք մինչև ալիքարենի հայտնաբերումը քարա-
ծութի կորի մեջ, կամ եւեկտրոնների հայտնաբերումն ասութի
մեջ, բայց անպայմանական ե այն, — վոր յուրաքանչյուրը այդ
պիսի հայտնաբերում անպայման որեկտիվ իմացության մի
քայլ ե զեղի առաջ։ Մի խոսքով, պատմականորեն պայմանա-
կան ե ամեն սի իգելողիքա, բայց անպայմանական ե այն, վոր
ամեն մի զիտական իգելողիքայի (տարբեր, որինակ, կը ոնական
իգելողիքայից) համապատասխանում ե որեկտիվ ճշմարտությու-
նը, բացարձակ բնությունը։ Դուք կասեիք հարաբերական և բա-
ցարձակ ճշմարտությունների այս տարբերումն անորոշ ն։ Յես
ձեզ կպատասխանեմ նա հնոց այնքան և «անորոշ», վորպեսզի
իսկանդարի գիտությանը վերածվելու գործային այդ բառի վատ-
թար իմաստով, ինչ գոր մեռած, լճացած, վոսկրացած բանի, բայց
նա միևնույն ժամանակ հենց այնքան և «վորոշ», վորպեսզի ա-
մենավճռական և անվերադարձ կերպով սահմանագատվի փիզի-
լիզմից և ագնոստիցիզմից, փիլիտիվայական իգելողիքից, Յումի
և կանունի հետեւկորդների սովորականությունից»²։

Կենինը պնդում է, վոր մարդու իմացությանն ընդհանրա-
պես հատուկ և զիտակտիկան, վորովհետեւ դիտեկտիկորեն ե
ապրում ինը բնությունը։ Նրա մեջ նկատվում են մշտական ան-
ցումներ, միախառնումներ, հակագրությունների փոխադարձ կապ։
Այսուաժենայնիվ իր մտածողության դիտեկտիկական հատկու-
թյունները, վորոնք խորապես համապատասխանում են բնության
իսկ համակություններին, դրանք զիտակցելու աստիճանին սարդը
հասնում է յերբեմն միայն, բարենպաստ պայմաններում միայն։
Ընդհակառակը, շատ հաճախ նրա դասակարգային շահերը կամ
նրանց գասակարգային շահերը, ովքեր զեկավարում են նրան,
կատարելապես կործանում են նրա և զեղի զործունեյության մեջ
ապրուղ դիտեկտիկան, այն փոխարինելով մտածողության քա-
րացած մետափիզիքական միերգներով։ Հենց այժմ, յերբ վորպե-
տարիատը հաղթանակ և տարել բութուալիտյալ հանդիպ, վերջ-

1 Կենին—Մատերիալիզմ և հմգերիսկրիտիզմով։ Քննադատական դիտ-
ություններ մի հետազիմական փիլիտիվայության մասին (Յերկեր, հ. XIII,
դություններ մի հետազիմական փիլիտիվայության մասին (Յերկեր, հ. XIII,
էջ 109):

2 Կենին—հ. XIII, էջ 111.



նականապես հաղթանակում և նաև մարզու բնական դիալեկտի-
կական մտածողությունը, վորը խեղաթյուրվել և սեփականատի-
բական հասարակակարգի կողմից: Այդ տեղի յեւ ունենալու գի-
տության և ստեղծագործության բոլոր բնագավառներում, այդ
թվում գրականագիտության և բուն իսկ գրականության մեջ:
Բոլոր մարդուստները բաժանում են այն կարծիքը, վոր Մարքսի
թեորիան ոբեկտիվ ճշմարտություն եւ: Այդ նշանակում եւ, վոր
«գնալով մարդուստն թեորիայի ուղիով, մենք ավելի ու ավելի
կմոտենանք ոբեկտիվ ճշմարտությանը (առանց յերբեք այն ըս-
պառելու). իսկ գնալով վարեվի այլ ուղիով, մենք խառնաշխոթու-
թյունից ու ստից բացի այլ բանի համանել չենք կարող»:

Լենինը կտրականապես հերքում է հասարակական գիտակ-
ցության ամեն մի շփոթումը հասարակական կեցության՝ հետ.
ոչասարակական գիտակցությունը, — ասում եւ նա, — անդրադա-
նում եւ հասարակական կեցությունը, — ահա թե ինչնամն եւ Մարք-
սի ուսումնքի եյությունը: Անդրագարձումը կարող է անդրա-
գարձելիք ստույգ, մոտավորապես ստույգ պատճենը լինել, բայց
նույնության մասին այստեղի խոսելն անհեթեթություն եւ: «Մարք-
կության ամենաբարձր խնդիրն եւ, — հաստատում է Լենինը, — ուշն-
տեսական եվոլյուցիայի (հասարակական կեցության եվոլյուցի-
այի) որեկտիվ տրամաբանությունն ընդգրկել ընդհանուր և հիմ-
նական գծերով, այն հաշվով, վոր ըստ հնարավորության ավելի
պարզորչ, հատակ կերպով, քննադատորին նետն հարմարեցվի սե-
փական հասարակական գիտակցությունը և բոլոր կապիտալիս-
տական յերկրների առաջավոր դասակարգերի գիտակցությունը»:

Դիալեկտիկական մատերիալիզմը վոչ մի գեպքում մարդուն
պասսիվ չի դարձնում, ընդհակառակը, նա չափազանց բարձրաց-
նում եւ մարդուստորին գիտակից մարզու ակտիվությունը: Լե-
նինն ասում է այդ մասին, «Ենքելիս մոտ ամբողջ կենդանի մարդ-
կային պրակտիկան ներխուժում է իմացությունը թեորիայի մեջ
տալով ճշմարտության ոբեկտիվ չափանիշը: Քանի գեր մենք չգի-
տենք ընության որենքը, նա, գոյություն ունենալով և գործե-
լով առանց մեր գիտակցության, նրանից դուրս, մեկ գարձնում
եւ «կույր անհրաժեշտության» ստրուկները: Մի անգամ վոր մենք
իմանում ենք այդ որենքը, վորը գործում եւ (ընդպես հազօր ան-
գամ կրկնել եւ Մարքսը) անկախ մեր կամքից և մեր գիտակցու-
թյունից, մենք բնության տերերն ենք: Տիրապետությունը բը-
նության վրա, վորն իրեն դրսեվորել եւ մարդկության պրակտի-
կայում, մարդու գլխում, բնության յերեվութների և պրոցեսնե-

քի ոբեկտիվություն ստույգ անդրագարձման արդյունքն եւ, ապա-
ցույցն այն առնի, վոր այդ անդրագարձումը (այն բանի սահ-
մաններում, ինչ մեզ ցույց եւ տալիս պրակտիկան) ոբեկտիվ, բա-
ցարձակ, հավիտենական ճշմարտություն եւ¹:

Ոբեկտիվ ճշմարտությունը կարելի յի, ինարկե, վորոնել
միմիայն ոբեկտիվ մեթոդով, վորպիսին և հանդիսանում է գիտ-
կելիկական մատերիալիզմը: Այս մեթոդը, սակայն, միևնույն
ժամանակ կուտակցական, դասավարդային մեթոդ և հանդիսա-
ժամանակ գիտակարգական, դասավարդային ու բացատրվում, վոր ախ-
նում: Նրա այդպիսի ընույթը նրանով եւ բացատրվում, վոր ախ-
ությունով բուրժուական դասակարգն ու նրանից կախված բուր-
ժուական գիտությունը ի վիճակի չեն ոբեկտիվ լինել, վորովնե-
տեղ ոբեկտիվ ճշմարտությունը հակասում է բուրժուազիայի շա-
տեղ ոբեկտիվ ճշմարտությունը: Սա շատ կարեվոր գրույթ եւ,
հերին և բուն իսկ գոյությանը: Սա շատ կարեվոր գրույթ եւ
վորը մեզ թույլ եւ տալիս վորոշելու մեր դիրքը բուրժուական
աշխարհի ժամանակակից պաշտոնական գիտության նկատմամբ
փմացողությունը կառուցելիս (այդ թվում նաև գրականապիտու-
թյան բնագավառում): Լենինն այս առթիվ ասում եւ: «Քիմիայի,
թյան բնագավառում, ֆիզիկայի հատուկ բնագավառներում ամենաար-
գատման թյան, աշխատություններ տալու ընդունակ այս պրոֆեսորնե-
մեքավոր աշխատություններ տալու ընդունակ ի վրա պրոֆեսորնե-
րից վոչ մեկին չի կարելի հավատալ վոչ մի խասխում, յերբ իրու-
թյուն վոչ մեկին չի կարելի նույն պատճառով, վո-
րը փիլիսոփայության և գալիս: Ծնչմաւ նույն պատճառով, վո-
րով քաղաքատնետեսության վոչ մի պրոֆեսորի, վորն ընդունակ
ատալու ամենաարժեքավոր աշխատություններ փաստական, հա-
տուկ հատազոտությունների բնագավառում, չի կարելի հավատա-
տուկ հատազոտությունների բնագավառում, չույն պիտի կուտե-
թեորիային և գալիս: Վորովնետեղ վերջինս նույնպիսի կուտե-
թեորիային և գալիս: Համար ությունը նրան հանգել չուվից
փատակիզմի և անտարբերության, այլ ներդաշնակորմն զագործ-
քատակիզմի և անտարբերության հանդեպ ամենակրթությունը հետ,
վեց իրականության հանդեպ ամենակրթությունը վերաբերմունքի հետ,
այդ սաօին վկայում եւ մի ուշագրավ տեղ նրա վաղ աշխատու-
թյուններից գիտնական գործակատարների, և վիլիսոփայության
գասակարգի գիտնական գործակատարների գիտնական գործակատար-
պրոֆեսորները՝ աստվածաբանների գիտնական գործակատար-

ներ²:
Վոր Լենինի խոր ոբեկտիվությունը նրան հանգել չուվից
փատակիզմի և անտարբերության, այլ ներդաշնակորմն զագործ-
քատակիզմի և անտարբերության հանդեպ ամենակրթությունը հետ,
վեց իրականության հանդեպ ամենակրթությունը վերաբերմունքի հետ,
այդ սաօին վկայում եւ մի ուշագրավ տեղ նրա վաղ աշխատու-
թյուններից գիտնական գործակատարների գիտնական գործակատար-
պրոֆեսորները՝ աստվածաբանների գիտնական գործակատար-

1 Լենին—հ. XIII, եջ 156.

2 Լենին—հատոր XIII, եջ 286.

ավելի հետեւղողականորեն, ավելի խորը, ավելի լրիվ և էիրառում իր որեկտիվիզմը: Նա չի սահմանափակվում պրոցեսի անհամաշտությունը մատնանշելով, այլ պարզում և, թե բնչպիսեածառարակական-տնտեսական ֆորմացիան և բովանդակություն-տալիս այդ պրոցեսին, վոր դասակարգն և վորոշում այդ անհրաժեշտությունը: Տվյալ գեպքում, որինակի համար, մատերիալիստը չեր բավականանա «անհազթահարելի պատմական տենդենցներն» արձանագրելով, այլ կմատնանշեր այն վորոշ դասակարգերի գոյությունը, վորոնք վորոշում են տվյալ կարգերի բովանդակությունը և բացառում իրենց՝ արտադրողների յելութից զուրագալու համարակորությունը: Մյուս կողմից, մատերալիզմն իր մեջ պարունակում և, այսպես ասած, կուսակցականություն, պարտավորեցնելով գեպքի ամեն մի գնահատության ժամանակ ուղղակի երացահայտ կերպով կանգնել վորոշ հասարակական խմբի տեսակետի վրա՞։ Այս մեջերումը հազիվ թե անհրաժեշտ լինի մեկնարանել, — այնքան պերճախոս կերպով և բնութագրվում այնտեղ կենինի բացասական վերաբերմունքը բոլոր այն ծրագրերի և թիորիաների հանդեպ, վորոնք «արտակուսակցականության» հավակնություն ունեն, այնքան ցայտուն և ուրվանկարվել այնտեղ լենինյան մեթոդը, վորի կուսակցականությունը. ամրողապես տոգորված և կուսակցական սրությամբ, — նրա բոլոր տեսական տշխատությունների բնորոշ հատկություն:

Հստ անհրաժեշտության սահմանափակվելով կենինի փիլիսոփայական հայացքները բնորոշող այս մեջերումներով, մենք մեկ անգամ ել ենք ընդգծում, վոր ամեն ինչ կենինի փիլիսոփայական ժառանգության մեջ վիթխարի նշանակություն ունի գրականագետի համար, ամեն ինչ յենթակա յե ամենաուշագիր ուսումնաբուժության, և յեթե սահմանափակվում ենք համեմատաբար քիչ մեջերումներով, ապա այդ մեկ հարկացը ուրեմն բորոշյութի բնույթը:

3. ԼԵՆԻՆԻ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Ինքնին հասկանալի յե, վոր իր հիմնական գծերով կենինի ուսմունքը կուլտուրայի մասին նույնն ե, ինչ մենք գտնում ենք Մարքսի և ենգելսի մոտ: Կուլտուրա հասկացողությունը նրանց մոտ ընդգրկում և ըստ եյության հասարակական կյանքի բոլոր ձևերը, բացառությամբ անմիջաբար արտադրական ձեերից, Անշոշտ, գերջիններու ել կարելի յե կուլտուրային վերագրել, յեւ և լենին. «Նարոդնիկության անտեսական բովանդակությունը»
6. 1, եղ 275—276:

թե վերջինս հակագրենք նատուրա հասկացողությանը, այսինքն քըն՝ բնություն առանց մարդու կատարած վորեհ փոփոխության, կուլտուրա հասկացողությունն իր մեջ պարունակում և բոլոր այսպիս կոչված վերնաշենքերը: Նրանց թվումն են մտնում վոչ միայն իգեոլոգիայի «զուտ» ձեերը, կրոնը, փիլիսոփայությունը բացականա կապահանգամբ համարական բարոյացությանը, արվեստը, այլ և կուլտուրայի այնպիսի ձեւնը, գիտությունը, արվեստը, այլ և կուլտուրայի այնպիսի ձեւնը, գորոնք անմիջաբար կապված են ենցաղի հետ՝ բարոյացությանը, վոչ միայն տիսականը, այլև այն, վոր անմիջականությունը, վոչ միայն տիսականը, այնև այն վոր անմիջականը կենցաղայնանում և կյանքում, ճշշտ և, զարձյալ իր իգեոլոգիական ու գործնական ձեերով և այլն: Կուլտուրայի այս բույրը ձեւնը անընդհատ փոխազդեցության մեջ են գտնվում միացանց հետ և վորոշ չափով ճնշում են զործ դնում նաև հասարակության տնտեսական փունդամենտի վրա: Կուլտուրայի բույրը ձեւնը և նրա վողջ գինամիկան վորոշի և հանդիսանում, վերը ձին հաշվառված, արտադրության պրոցեսը: Հենց նրանով են պայմանավորվում մեփականության հարաբերությունը բույրը մեջ ըստ արտադրության բույրը վրայության պրոցեսը: Վասակարգերը տարրեր դեր են խաղում արբերի խմբավորումը: Դասակարգերը տարրեր դեր են խաղում արտադրական պրոցեսում և տարրեր իրավունքներ ունեն արտադրության զործիքների ու նրա արդյունքների վրա: Հենց դասակարգային կոնֆիգուրացիան և վորոշում տվյալ հասարակության պետական կառուցվածքը, քաղաքական կյանքը և իգեոլոգիական վերնաշենքերի բոլոր սնացած ձեւները:

Մարքսիզմ կենինիզմի այս ընդհանուր զորոյթներից, վոր վերաբերում են կուլտուրային, գառնանք այն ամենաարժեքավերը և որիզինալ մտքերին, վորը մտցրել և կենինը կուլտուրայի ուսմունքի՝ գրականագիտության այդ անհրաժեշտ հիմքի մեջ:

Լիովին տեղին ե զուգահեռ անցկացնել կուլտուրայի լինին և պլեխանովյան ուսմունքների միջեվ, վորոնք ամենաունյան և պլեխանովյան ուսմունքների միջեվ, վորոնք ամենա

Հնդակածում եր պրոլետարիատին, բայց չեր կարողացի ամբողջապես միաձուլվել նրան։ Այդ իր արտահայտությունն ունեցավ կուլտուրայի պլեխանովյան ուսմունքի և մի շաք զրականացիական պրոբլեմների լուծման վրա։

Պայքարելով նարողնիկների սուբհկտիվիզմի գեմ, վորոնք միամաւարար հավատում եյին, թե պատմությունը կերտում եւ քննադատորեն մտածող մարդիկ», այսինքն՝ ինտելիգենցան. Պէս խանովն անսովոր յեռանդով ապացուցում եր, թե կուլտուրական յերեվույթների, մասնավորապես գրականության ուսումնասիրությունը պետք ելինի գուտ գենետիկական և անիառն որեկտիվ նրա կարծիքով մարքսիստ զրականագետը վոչ մի դեպքուն չպետք երեխ առաջադրի այս կամ այն կուլտուրական յերեշվույթի դրական կամ բացասական բնույթի հարցը, գառապարտի այն կամ ծափակարի նրան։ Մարքսիստական գրականագիտությունը, ըստ Պէխանովի, պետք եւ սահմանագիտակելով տվյալ յերեւյթի և նրա բոլոր պատճառների անխուսափելի որինագույթյունը պարզելով։

Այլ կերպ եր դնում այս պրոբիեմները կենինց: Իհարկե, նա հիանալի հասկանում եր առանձին կուտուրական յերեսույթները նրանց գասակարգային եկվիվալենտի տեսակետից ըւսումնասիրեալու վիթխարի նշանակությունը: Բայց նրա համար դա լոկ նախապատրաստություն եր ուսումնասիրելու յերեսույթն ամբողջապես վերցրած, վրովինետև բուն ուսումնասիրությունը լիովին համապատասխան պրոլետարիատի մարտական և ստեղծագործական ական բնույթին՝ կենինի մոտ լոկ նախադրյալ եր հանգիստնում անցյալի կուլտուրան գործնականորեն ուսումնասիրելու և նրա այնպիսի նոր ձևեր կառուցելու համար, վրոնք համապատասխանելին պրոլետարիատի շահերին: Պիխանովին անկասկած հատուկ եր վորոշ խոզու անկողմնակալ թեորիայի և շինարարության միջև, վորը նրա առաջ գծվում եր մշուշ սպատ հեռվում կենինն առաջնորդ եր կազինուալիզմի խորտակման և սոցիալիզմի գործնական կառուցման գործում: Իմացողական աշխատանքը նա անմիջաբար ծառայեցնում եր հեղափոխական պրակտիկային: Այստեղից՝ նրա ժիանգամայն նոր տոնուսը, իհարկե՝ խորապես մարքսիստական, քանի վոր նա խորապես համապատասխանում է Մարքսի հեղափոխական ուսմունքի վոզուն, և միենալու ժամանակակից վորովի առանձին, վորովինետեղ առաջին պրոլետարական մեծ հեղափոխության եպոխան նախ և առաջ կենինի հանձարեղ ձեռքով առանձին ուժգնությամբ ընդգծեց կուլտուրայի տեսական յուշագման հենց այդ բնույթը:

Անցյալի կուլտուրային և նրա՝ մեզ ամենամռութիկ ստագիա-
յին—բուրժուական կուլտուրային, մանավանդ նեխող կտպիտա-
լիզմի կուլտուրային—լենինը վերաբերվում եր անխնա քննա-
գառականությամբ, շատ բան և ամենաեյականն այդ պատմական ֆոր-
մացիաների մեջ առաջացնում և նրա զայրույթը, ատելությունն
ու արհամարհանքը: Մենք վերսում կարդացինք արդին նրա կար-
ծիքը փիլիսոփայության պրոֆեսորների ճամփան: բուրժուական
ինտելիցիային այդ ջոկատը բացառություն չի կազմում: Այս
ըստուքը վերջում ընթերցողը կդանի հիանալի տողեր, վորոնց
մեջ յեռում եւ լենինի վրագովունքը հին կուլտուրայի հանգեպ
և վորը նա զըել եւ «գրականության կուսակցականության» կա-
րեքոր հարցի առնչությամբ:

Անցյալի կուլտուրայի այդպիսի գատապարտումներ նրա
մոտ կարելի յե հանգիպի ահազին քանակությամբ, բայց սրա-
նից ամեններին չի հետեւում, թե ինչինն անցյալի այդ կուլտու-
րան գատապարտում եր ամբողջովին, այսինքն յենթագրում եր
թե նրա մեջ չկա վոչ մի տարր, վորը յենթակա լինի պրոլետա-
րիատի քննադատական յուրացմանը նորիկուլտուրայի կառուցման
համար ինարկե, դա վերաբերում ե վոչ միայն ճշգրիտ զիտու-
թյունների և տեխնիկայի բնագավառին, այլ և կուլտուրայի մյուս
բնագավառներին: Զանազան գասակարգեր, վորոնք հնում տիրա-
պետել են զանազան հասարակությունների մեջ՝ սաեղել են
կուլտուրական արժեքներ, վորը վոչ միայն հետաքրքիր և ու-
սումնասիրել ճիշտ և սսկանական համար մարդկության պատմու-
թյան ուղիները, այլև վորոնք կարող են անմիջականորեն ոգ-
տակար լինել մեզ համար: 1919 թվին մի միտինգում կձնինը, ի
միջի այլոց, ազգաբարեցց, «Ճզմզած կապիտալիզմ» փոր չի հշտաց-
նի: Պետք ե վերցնել այն ամբողջ կուլտուրան, վո-
րը թողել ե կապիտալիզմը, և նրանից սոցիալիզմ կառուցել:
Պետք ե վերցնել ամբողջ զիտությունը, տեխնիկան, բոլոր գիտե-
լիքները, արվեստը: Առանց դրան մենք կումունիստական հասա-
րակության կյանքը կառուցել չենք կարող: Իսկ այդ զիտություն-
րակության կյանքը կառուցել չենք կարող: Իսկ այդ զիտություն-
նը, տեխնիկան, արվեստը մասնագետների ձեռքումն են յեզ-
նը, նրանց գլուխումն է:

Այս մտքերն առանձին ուժգնությամբ և ամբողջականությամբ ե արտահայտել վլադիմիր ԻՍԻԾ ՌԿԵԵՄ 3-րդ Համառուսաստանյան համագումարում արտասահմած նշանագործ ճառում 1920 թվի Հոկտեմբերի 2-ին. «Այն ամենն, ինչ ստեղծել ե մարզ-

1 ԱՅՆԻՆ. ԽԱՐԲՀՊԱՐԴԻՆ ԻՇԽԱՆՈՒ
ՔՐԱՆՆԱԵՐԸ (ՅԱՐԿԵՐ. հ. ՏՏԼՎ, ԿՂ 65):

կային հասարակությունը, նա (Մարքուր. — Ա. է.) վերածակեց
քննադատորնեն, վոչ մի կետ չթողնելով առանց ուշագրության։
Այս ամենն, ինչ ստեղծել ե մարդկային ժմուքը, նա վերածակեց՝
քննադատության յենթարկեց, սառողելով բանվորական շարժման
հիման վրա, և արագ այն յեզրակացությունները, վարը բութու-
ական շրջանակներով սահմանափակված կամ բուրժուական նա-
խառաջարումներով կապված մարդիկ անել չերին կարող Այդ
պիտք ե նկատի ունենալ, յերբ մենք, որինակի համար, իրուու-
ենք պրոլետարական կուլտուրայի մասին։ Առանց պարզ հասկա-
նալու այն, վոր մարդկության վողջ զարգացումով ստեղծված
կուլտուրան ճշտիվ գիտենալով միայն, այն վերամշակելով մի-
այն կարելի յե պրոլետարական կուլտուրա կառուցել — առանց
այդ հասկանալու մենք այս խնդիրը չենք լուծի։ Պրոլետարական
կուլտուրան չգիտես վորտեղից դուրս պիծած կուլտուրա չի հան-
դիսանում, իրենց պրոլետարական կուլտուրայի մասնագետներ
անվանող մարդկանց հնարած բանը չի հանդիսանում, դա կա-
տարյալ անմտություն ե։ Պրոլետարական կուլտուրան պիտք ե
հանդիսանա որինաչափ զարգացումը գիտության այն պաշարնե-
րի, վորը մարդկությունը մշակել ե կապիտալիստական հասարա-
կության, կալվածատիրական հասարակության, չինովնիկական-
հասարակության ճնշման ներքո։ Բոլոր այդ ուղիներն ու շավիղ-
ները տարել են ու տանում են և շարունակում են տանել գեպի-
պրոլետարիատի գիկտատուրան այնպիս, ինչպիս Մարքոսի վերա-
մշակած քաղաքատնտեսությունը մեզ ցույց ե տվել այն, թե ին-
չի յե համեմելու մարդկային հասարակությունը, ցույց ե տվել-
անցումը գեպի դաստկարգային պայքարը, դեպի պրոլետարական-
հեղափոխության սկիզբը»¹։

կենինի այս գրությթներից լիակատար հստակությամբ
բղխում ե, թե անցյալի կուլտուրայի ուսումնասիրությանը ինչ
պես ըստ նրա գասակաբացային եյության (գենետիկորեն), այն-
պիս ել նրա արժեքի իմաստով (Փունկցիոնալ կերպով) կենինի
համար ինչպիսի վիթխարի չափով նախապատրաստական ետապ
եր հանդիսանում կուլտուրայի կառուցման ձևանակարենին:

Սոցիալիստական կուլտուրա ստեղծելու հարցը և ներնընթառական ծառանում եր վոչ այնքան ընդհանուր ձեռփառ է, իբրև համաշխարհային պրոլետարիատի միջոցով համաշխարհային նոր կուլտուրա ստեղծելու պրոբլեմ, վորքան ավելի մասնակի ձեռփառ իբրև մեր յերկրում քաղաքական իշխանությունը պրոլետարիատի ձեռքի անցնելուց անմիջապես հետո այդ նոր կուլտուրան կառուցելու համար առաջարկ է առաջնահարցը:

Լենինն ամենեվին չեր փոքրացնում սոցիալիստական գույքը առաջացի նոլատակների թափը: Ծավալելով ավարտված սոցիալիստական կարգերի փայլուն պատկերը՝ պլանային բարձր արտազդությամբ, կենցաղի բարձր մակարդակով, կարգեր, փորտեղ յուրաքանչյուրը ստանում ե իր աշխատանքի համաձայն, աշխատանքը, վորը միենույն ժամանակ ընդհանուր առմամբ բարձրութակ ե ու արդյունավետ, կենինը՝ վարպես հետազա խնդիր՝ առաջադրում ե անցումը դեպի իսկապես կոմունիստական կարգերը, վորոնց սկզբունքը կիմիւ—յուրաքանչյուրից համաձայն նըրա ընդունակությունների և յուրաքանչյուրին ըստ նրա ռահանջմունքների: Այս բարձրագույն սկզբունքը կենինն անխղելու որեն կապում է մարդու գերստեղծման վիթխարի աշխատանքի հետ, պրոլետարիատի միջոցով իր վրա կատարելիք խոր աշխատանքի հետ՝ աշխատավորական վաղ մասային հանելու համար այն բարոլական բարձրության վրա, վորը զանազան քաղքենիների թվում ե անհասանելի քանտառափական:

38. 244

¹ *Abibul.* 6. XXV, 42 387:

Նինը սոցիալիստական կուլտուրայի համար։ Տողերիս գրողը վա-
խեցել էր արժեքավոր գեղարվեստական շենքերի ավերումնե-
րից, վրանք տեղի ելին ունենում Մուսկվայի հոգափոխական
պրոլետարիատի ժամանակավոր կառավարության զորքերի գեմ
մզած մարտերի ժամանակ, և այդ առթիվ խիստ լուրջ ճշշակ-
ման» յենթարկվեցի մեծ առաջնորդի կողմից։ Ի միջի այլոց այն
ժամանակ այսպիսի խոսքեր ասվեցին ինձ։ «Ի՞նչպես դուք կա-
րող եք այդպիսի նշանակություն տալ այս կամ այն հին շեն-
քին, ինչքան ել նա լավ լիսի, յերբ խնդիրը վերաբերում է այն
պիսի հասարակարգի գոները բացելուն, վորս ընդունակ և ստեղ-
ծելու այնպիսի գեղեցկություն, վորս անչափ գերազանցելու
յե այն ամենն, ինչի մասին յերազել կարող ելին անցյալում։

Անհնան ուղղակի խոսում եր այն մասին, թե այս զուռ
նիստը, վորն ընդունակ չե սեալ յերազի թաէչքների՝ այսինքն՝
լայն հեռանկարների, ապագայի լայն պատկերների, նավատ կո-
մունիստ և Բայց հեղափոխական ոռմանտիզմը Լենինի մեջ որդա-
նապես զուգորդվում եր ամենաամուր գործնական ձեռնարկման
հետ: Ահա թե ինչո՞ւ նոր կուլտուրայի կառուցման գործում նը-
րան հատկապես հետաքրքրում եյին այն խնդիրները, վարժութեանը
որվա կենսական խնդիրներ եյին հանդիսանում: Հենց այդ կող-
մից շափականց կարեվոր ե յուրացնել այսպես կոչված Պրոլետ-
կուլտի կուլտուրայի ուսունքի լենինյան քննադատության ներ-
քին բովանդակությունը:

1922թ թվի սեպտեմբերի 27-ի «Պրավդա»-յուն տպագրված գլուխութեան մասին համարը մեկի՝ վ. Ֆ. Պլետնյովի հոգվածը — «Փղեղողիական ճակատում»։ Այդ հոգվածը պարունակող «Պրավդա»-ի համարը կենինը նախշել է մատիտով արված բազմաթիվ գիտողություններով։ «Պրավդա»-ի այդ համարի լույս տեսնելուց քիչ ժամանակ անց նույն թերթում լույս տեսավ Յա. Ցակովիկի հոգվածը՝ «Պրոլետարական կուլտուրայի և Պրոլետարական գիտության վերնագրով։ Այդ հոգվածի հիմնական գրույթները ճշտիվ դուզադիպում են Վլադիմիր Ռյաչիչի գիտողություններին, և ինքը հոգվածը հանդիսանում է այդ գիտողությունների սիստեմագործում։ Այդ հոգվածն անկասկած կարգացվել և հավասարացվուն եր գտել կենինի կողմից։ ուստի մենք, ինչպես այդ արգելու արել են շատ ուրիշները, մեջ ենք բերում այդ բովանդակությունները։ Այդ հոգվածը՝ լիովին վստահ լինելով, վոր նա արտահայտում է հենց կենինի գողագործարները։

Անհինը զայրալի վերաբերմունք ցուց տփեց կուլտուրա հաս-
ացողության այն արհեստականությանը, վորն իր հողվածի, ինչ-
դեռև և իր վողջ պրակարիկ գործունեյության հիմքում դրել եք
նկ. Պլետնյովը, հավատարիմ արտահայտիչն այն փոքր ինչ ա-
ռոտ զաղափարների, վորոնք Պրոլետկուլտի պրակտիկայի տեսա-
լան հիմքն եյին կազմում: «Յեթե մենք,—արդարացի կերպով
դրուժ եք ընկ. Յակովիկը,—«կուլտուրայի» մասին դատելու լի-
նենք ըստ «պրոլետարական կուլտուրայի» այն կոնկրետ դրսեվո-
ւումների, վորը մատնանշում ե ընկ. Պլետնյովը, ապա հարկ կի-
սի կուլտուրան հանդել առաջինությանը, թատրոնին ու արվես-
տին, մինուս նրանց նյութական տարրերը»: Յեկ այնունեածիվ
ընկ. Պլետնյովի մոտ կուլտուրան մի տեսակ քիմիական ռեակ-
տիվի նման բան է, վորը Պրոլետկուլտի թօրանոթով կարելի յե-
տանալ հատկապես ջոկված մարդկանց խմբերի ոգնությամբ նոր,
պրոլետարական կուլտուրայի տարրերը նրա մոտ յեխում են պրո-
վետկուլտայն ստուգիաներից, մոտավորապես այնպես, ինչպես մի
ժամանակ հնագործայն տատվածութիւն պատրաստի դուրս եք գալիս
ծովի փրփուրից»: Իիովին համաձայն Լենինի հետ, Յակովիկը
գտն ուժ ե, վոր կուլտուրայի հիմնական խնդիրն ե հանդիսանում
նախ և առաջ ամենատարբական կուլտուրականության ընդհա-
նուր բարձրացումը մեր յերկում: «Բյուրոկրատիան, վորն ամ-
բողջապես մաշում ե մեր պետական մեխանիզմի մարժինը, շատ-
տարիների համար մեր խնդիրն ե զարձնում ձգտել թեկուզ բուր-
ժուական կուլտուրայի լավագույն կողմերին... Կատարելապես
անկատած ե, վոր մեր հեղափոխական յերիտասարդության ձգ-
տումը՝ ունենալու ըստ հնարավորության քըքրված, տրորված-
ուկրայիրիտական» տեսք, կեղու հանրակացարանում, յու և փայտո-
ջիւ խորհրդացին տներում, այս ամենն անկուլտուրականության
անդրադարձումն են»: Այնունեածիվ նշվում ե անդրագիտության
դեմ մղվող պայքարի սակագ հաջողությունը (այժմ, ինարկե-
շատ բան այս ամենից մեր հետեւյումն ե մնացել): Կուլտուրական
խնդիրներին ե վերաբերում «գյուղացուն սովորեցնել կուլտուրա-
կան տնտեսավարման տարբական պրիուները և այլն»: Մյուս
կողմից, պրոլետկուլտականներն աշքաթող են անում «կուլ-
տուրայի այնպիսի կարելուրագույն տարրեր, ինչպես բարոյակա-
նությունը, սովորույթները և իրավունքը, վորակ պրոլետա-
րիատն իրոք մի շարք զգալի տեղաշարժեր ե կատարել և կատա-
րում ե»: Այսուեկ գլխավոր տեղն ե դրվում ինտենսիվ ուսուցումը:
«Դրան կարելի յե հասնել սիմիայն ոգատագործելով ժողովրդական
ուսուցչին, ինժեներին, պրոֆեսորին»: «Այն սխալը, վորն արին

Ընկերները 1918-1919 թվականներին, ուսումնական մասնագիտների նկատմամբ, հետագայում՝ արդյունաբերության մասնագետների նկատմամբ, Պէտանյովը մեխանիկորեն փոխադրում է կուլտուրայի բնագավառը։ «Վոչ թե զիհետանտական, ինքն իրող հիացող, իբր թե պրակեակուլտյան գիտություն, վոչ թե «սոցիալականացման» գերաբերյալ խոսակցություններ, վորը չի հասկանա վոչ մի բանվոր, այլ նորանոր հարյուր հազարամարդ բանվորների գյուղացիների լուրջ ուսուցումը բազմաթիվ տարիների ընթացքում։

Ըսկ. Յակովիլի անցնում և նաև արքեստի հարցերին, յեզ
վի այստեղ ել ունենալով առաջնորդի հաստատում զիրեկտիվը.
Մենք ապրում ենք պայքարի եպօխայում,—ասում ենա:—Բնա-
կանաբար, արքեստը պետք է գիտել նախ և առաջ իրեն հասա-
ւակական ուժ: Արքեստի նկատմամբ ևս, վորը համարձակվում ե
րիքն պրոլետարական կոչել, մենք իրավունք ունենք առաջա-
զդել քիչ ավելի մեծ պահանջներ, քան թեկուղ Փոքը Թատրոնի
մական գործունեությունը Նիվսկի պրոսպեկտի մայթը չե»—ասում եր ոռուսական մեծ հեղափոխական Զերնիշեվսկին։ Ով «թույլ ե տալիս» պրոլետարիատի հեղափոխությունը լոկ «այն պայմանով», վոր այն ընթանա թեթև ու սահուն, վոր մեկ անգամից լինի զանգան յերկրների պրոլետարների միացյալ գործողություն, վոր հեղափոխության ճանապարհը լինի լայն, ազատ, ուղիղ, վոր կարիք վինի ժամանակ առ ժամանակ, դեպի հաղթանակ գնալով, ամենածանը զոհել տալ, «նստած մնալ պաշարված ամրոցում կամ գնալ նեղ, անանց, վորուալույտ ու վտանգավոր լիոնային կածան-ներով,—նա հեղափոխական չե, նա իրեն չի ազատագրել բուրժուական ինտելեկտունցիսի պեղանտությունից, նա զործնականում շարունակ գլուրվելիս կլինի հականեղափոխական բուրժուականի բանայի բանակը, ինչպես մեր աշ եսերները, մենշեվիկները և անգամ (թեպետ և ավելի սակավ) ձախ եսերները»¹։

Այս քաղվածքներին—զրանք հետ ե բազմացնել—անհրաժեշտ ե կցւ և Կ. Կրուպսկայայի վկայությունը այն չափազանց դրա կան վերաբերունքի մասին, վոր ուներ լենինը Զերնիշեվսկու կան վերաբերութիւնի նկատմամբ։ «Նա սիրում եր Զերնիշեվսկու «Ի՞նչ քելետրիստիկայի նկատմամբ»։ Նա սիրում եր Զերնիշեվսկու կան վերաբերութիւնի նկատմամբ։ Վերաբերությամբ նա կազում մենել վեպը, չնայած նրա սակավ գեղարվեստական, միամիտ ձեռնել վեպը, Յես զարմացած եյի, ինչպիսի ուշաղրությամբ նա կազում մեր այդ վեպը և ինչպիսի ամենանուրը գծեր, վոր կան այդ վեպում, նա նշում եր»²։

Վոչ մի տարակույս չկա այն մասին, վոր Զերնիշեվսկունկամբ լենինի տածած համակրանքի մեջ կար յերկու հանունկատամբ լենինի տածած համակրանքի յուրատեսակ ժամանգականություն, վոր Հարեկ հեղափոխականների յուրատեսակ ժամանիշեվսկուն իրենեվ մարքսիզմի ամենառաջգուազ նախալարապետներից մեկի։ «Զերնիշեվսկին մեր վարակեց իր անհաշտությամբ՝ հանդեպ լիբերալիզմը» լի-քերալ ֆրազների, լիբերալիզմի վեղջ զիրքի վեղջ զիրքի նկատմամբ անվատահությունը կարմիր թելի պես անցնում ե լենինի վողջ զործունեցիւթյան միջոց։ Յեթե վերցնենք սիրերյան աքսորը, բողոքը յության ամենա կադեսաների հետ, մենք կտեսնենք, վոր Վլադիմիր Իլյչը նույն անհաջող գիծն եր բոնում, ինչ ըրնել եր Զերնիշեվսկին լի-քերալների նկատմամբ, վորոնք դափանացին գյուղս ցիությանը

¹ ЛЕНИН, «Письмо к американским рабочим», т. ХХIII, стр. 183.

² Н. Е. КРУПСКАЯ. Воспоминания о Ленине 1931 г. стр. 187.

1861 թվի ոեֆորմի ժամանակ... Տալով [80-ական թվականները՝
բուռժուականացած, ցարիզմի հետ հաշոված նախողնիկության-
բուրժուականիքուալ դեմոկրատիզմի գնահատականը, լենինը նրան-
հակադրում եր հեղափոխական մարքսիզմի դեմոկրատիզմը։ Զեր-
նիշեպսկին տվեց գոյություն ունեցող կարգերի դեմ անհաշտ պայ-
քար մղելու որբնակը, պայքար, վորտեղ դեմոկրատիզմն անխղիլ-
կերպով կապված եր սոցիալիզմի համար պայքարելու հետ։^{1:}
Հանձին Զերնիշեպսկու՝ լենինը մեծարում եր՝ խարված գյուղա-
ցիության շահերի համար պայքարող ամենահամառ ու ամենա-
պանծալի մարտիկներից մեկին, և պատահական չե, վոր իր վար-
ժամանակվա հրապարակախոսական աշխատության մեջ նա գյու-
ղացիական ոեֆորմի իմաստը բաց և անուամ Զերնիշեպսկու «Պրօ-
լոց և պրօլոց» վեպի հերոս Վոլգինի բերանով, վորի բերանը
Զերնիշեպսկին դրել եր իր մտքերը^{2:}

Զափազանց բարձր եր նաև 60—70-ական թվականների ոռուսական նարողիկներին լենինի տված գնահատականը: Այդ գնահատականն ավելի դրական եր, քան կ. Տոլստոյին տված գնահատականը, վորովհետև նստրովնիկները, արտահայտելով նույն պյուղական իզձերը, կանգնած երին այն ժամանակվա հասարակության ձախ թեքությամբ: Սակայն դա չեր խանգարում է ենթերե նեխու այդ յերկու մեծ հեղափոխական դեմոկրատների յերկերի յերկուրյան այն տասինանքը, վորք չեր կարող նրանց յուրահատուկ լինել, վորովհետեւ առանց պատմական յերկվության կարող ելինել միմիայն պրոլետարիատի տեսակետը, իսկ գեղարվեստական գրականությունը:

յան ընութագրությունից մինք կտեսնենք ստորև, վոր գյուղացիությունն իր գիտակցությամբ ամբողջապես հեղափոխական էքսպարտի բնափառ գործառականությունները:

Նարողնիկները գյուղացիության առաջնորդներ - յ իմաստով, վոր նրանք կարողացան իրենց լավագույն եպօխա-
յում, նախքան իրենց լեզաւացումն ու գոհեկացումը, վորպիսին
սկսվեց արգեն Միխայլովսկու հետ միասին, — գյուղացիության
շահերը ներկայացնել անհամեմատ ավելի զուած ձեզով, քան Լեվ
Տոլստոյը: Նարողնիկները գյուղացիության հեղափոխական-դե-
մոկրատական ներկայացուցիչներն եյին: Միխայլովսկու մասին
զրած հոդվածում Լենինը տալիս և նարոդնիկների ընդհանուրը
բնութագրությունը: Այդ բնութագրությունից, վորը մանք կըե-
րենք ստորեկ, յերեվում ե, վոր Միխայլովսկին արգեն նարոդ-
իկի անկումային տիպ եր, վոր անհամեմատ տեղի յեր տալիս
նիկի անկումային տիպ եր, վոր անհամեմատ տեղի յեր տալիս

¹ Н. К. Крупская. Воспоминания о Ленине, 1931 г., бг 182.

² ЛЕНИН, «Что такое «друзья народа»... т. I, стр. 178-180.

դիկ նրա միջավայրից և այն մարդիկ, վորոնք համակրանքով լեցուն եյին նրա ծանր զրության նկատմամբ, այսպես կոչված ռադղոչինները—գլխավորապես՝ ուսանող յերիտասարդությունը, ուսուցիչները և ինտելիգենցիայի մյուս ներկայացուցիչները—աշխատում եյին լուսավորել և արթնացնել գյուղացիական քնած մասսաներին։ Բուրժուա-դեմոկրատական շարժման մէջ Միխայլովսկու պատմական մեծ ծառայությունը Ռուսաստանի ազտատրման ոգտին՝ այս եր, վոր նա ջերմորեն համակրում եր գյուղացիների ճնշված դրությանը, յեռանդով ոյ օյցարում եր ձորտատիրական ճնշման բոլոր և ամեն տեսակ զրությունների դեմ, ինքայլ բացահայտ մամալում պաշտպանում եր թեկուզ և ակնարկներով—համակրանքն ու հարգանքն «ընդհատակի» նկատմամբ, վորտեղ գործում եյին ամանահետեւզողական և վճռական ռազնոչին դեմոկրատները, և նույնիսկ ինքն եր ոգում այդ ընդհատակին։¹

Լավագույն նարոգնիկները, Զերնիշեվսկու և Դոբրոլյուբովի տիպի հեղափոխականները, Ուսպենսկու և Սալտիկովի տիպի գրողները դեմոկրատական հեղափոխության անշեղ ու անհաշտ կողմաներն եյին։ Սակայն այդ չեր նշանակում, թե, լինելով ամենից ավելի հետեւզողական արտահայտիչները մասսայական գյուղացիության բուն շահերի, վորպիսիք կարող եյին այն ժամանակ գոյություն ունենալ, նրանք չընկան ամենալուրջ մարդությունների մեջ։ Նախ և առաջ նրանք իդեալականացնում եյին գյուղացիությանը, հաճախ չհասկանալով նրա մեջ թագնված ներքին հակասությունները։ Նրանք չեյին հասկանում նաև այն, վոր զուտ գյուղացիական հողի վրա հնարավոր և միայն բուժուական հեղափոխություն, թեկուզ և խիստ վճռական, խիստ «պլեբեյական»։ Նրանք աշխատում եյին գյուղացիության վկին փաթաթել համայնքային սոցիալիզմը։ Ինքնին հասկանալի յե, ինչպիս բազմից նշել և լենինը, այդ սոցիալիզմը չեր կարող միանգամայն ուսուպիտական չլինել իր իրազործելիության տեսակից և չեր կարող միևնույն ժամանակ կիսատապատ, տարտամ Ալինել բուն իսկ բնույթով։ Լենինն այդ տեսակետից համակրանքով և մեջբերումներ անում առաջին ուսուական մարքսիստներից մեկից՝ Ի. Ա. Գուրեվիչից։ «Յական թվականների նառըողնիկը,—շատ շեշտակիորեն ասում ե Գուրեվիչը.—վոչ մի պատկերացում չուներ հենց գյուղացիության ներսում յեղած պատակարային հակամարտության մասին, այդ անտագոնիզմը սահմանափակելով բացառապես կուլտ կամ պորտալույթ «շահագոր-

ժողի» և նրա զոհի՝ կոմունիստական վոգով տոգորված գյուղացու հարաբերություններով։ Դեր Ուսպենսկին առանձին երկանքնած իր սկեպտիցիզով, հեղնական ժպիտով պատասխանելով ընդհանուր իլլյուզիային։ Դյուղացիությանը հիմանալի հանաչելով և իր վիթխարի արտիստական տաղանգով, վորը թափանցում եր յերեվույթների բուն եյության մեջ, նա չեր կարող չտեսնել, վոր ինդիվիդուալիզմը դարձել և վոչ միայն վաշինուայի և պարտապանի, այլև առնասարակ գյուղացիների միջև յեղած տնտեսական հարաբերությունների հիմքը»²։

Ուսպենսկուն լենինն առանձին սիրով եր վերաբերումն «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ կովկասի բնութագրությունը տրվում և այդ նարունիկի ակնարկների մեջբերումով։ «Այս յերկիրը, վորը հետուեֆորմյան շըբանի սկզբում թույլ եր բնակված կամ բնակված եր համաշխարհային տնտեսությունից և նույնիսկ պատմությունից մեկուսի կանգնած լեռնականներով, դարձել և նավթարդյունաբերողների, գինուու առեվտրականների, ցորենի ու ծխախոտի ֆարբիկանտների յերկիր, և պարոն Կուպոնը հապարտ լեռնականին նրա բանաստեղծական ազգային զգեստի փոխարեն անխիղմ կերպով հազցնում և յերկոպական լակերի զգեստը»³։

Ուսպենսկու յերկերից վերցված մի շարք պատկերներ ապահում են լենինյան հրապարակախոսության մեջ։—«Կուպոնի հերոսները»⁴, վոստիկանական պահակ Միմբերցովն իր «քաշել և բաց վթողներ»⁵ խորհրդանշանով, «Խվան նեպոմոնյաշչինները»⁶ և այլն։

Լենինը բազմից նշել ե, վոր Ուսպենսկին վոչ միայն մյուս, ամենից ավելի ուղղիկալ նարունիկների հետ միասին հետեւզողական գեմոկրատական հեղափոխական եր, այլև նա, Զլատովրատուկու տիպի նարունիկներից տարբեր, վորոնք աշխատում եյին ի սեր իրենց իդաերի՝ գյուղացիությանը «պատրաստել հատուկ նարունիկական սոուսի համար,—հիանալի տարբերում եր գյուղի շնրավորումը և վոչ միայն հասկանում եր գյուղական կուլտակի բուլոր հատկությունները, այլև մեծագույն թախիծով, վորը նըրան հետագայում անձնական աղետի հասցեց, արձանագրում եր գյուղացիության հոծ մասսայի մանր-սեփականատիրական տեհնողենները և այդ տեսակետից ավելի բարձր եր կանգնում նարունիկությունից, քայլքայում եր նրա լլլյուզիանները, դժբախտաբար

¹ Լենին, Շինչ են օժողովով բարեկամները, հ. 1, եջ՝ 157—158.

² Լենին, Յերկեր, հ. III, եջ՝ 464։

³ Լենին, Յերկեր, հ. IX, եջ՝ 31։

⁴ Լենին, Յերկեր, հ. XVIII, եջ՝ 448։

⁵ Լենին, Յերկեր, հ. XXVII, եջ՝ 171։

շտեսնելով այն նոր ուղիները, այն «փրկությունը», վոր միջակ և չքափոր դյուղացիությանը կարող եր բերել պրոլետարիատը։ Ուսպենսկու բնութագրության հիմքում դրված և անդրադարձման նույն թերթիան, վորը, ինչպես կտեսնենք ներքեվում, կիրառված և կեզ Տոլստոյի վերաբերյալ բոլոր հոգվածներում։

Բնութագրելով Ուսպենսկուն, կենինը կրկնում և նույն պրիուր, վորը, ինչպես կտեսնենք այժմ, կիրառված և Տոլստոյի նկատմամբ։ Պեխանովի համար, վորը նույնպես դրել և Գլ. Ուսպենսկու մասին,—վերջինս նախ և առաջ մանր-բուրժուական ինտելիգենտ և Այս անձնական ծագումը—ինքնին, թերեւ, ինտելիգենտ Ուսպենսկու հետաքրքիր ուղի դեպի գյուղացիությունը— կենինն իր ընդհանուր հողվածների մեջ (նա Գլ. Ուսպենսկուն համար հողված չեն նվիրել), կարելի յե ասել, անտեսում և Նրա համար այդ չե կարեվոր։ Նրա համար գերիշխող և հանդիսանում այն փաստը, վոր Ուսպենսկին ամբողջ եյությամբ կողմնակից եղարգացման «ամերիկական ուղուն», վոր նա սուբեկտիվորեն միանգամայն ազնվությամբ համեմում և այն սոցիալիստական ուստոպիզմով և վոր դրանից բացի—դա արդեն Ուսպենսկու այն գիծն և, վորը նրան առանձնացնում և նրա զինակիցների մեջ— նա վարակված և այն սկեպտիկզմով նարոդնիկության նկատմամբ, վորը վոր կես հոյակապ անցում կծառայեր դեպի մարքսիզմը, յեթե Ուսպենսկին ապրեր սինչե համապատասխան եալուսան իհարկե, այստեղ ևս չի կարելի չնշել Ուսպենսկու վիթխարի տաղանդը։ տաղանդ, վորը նույնպես վերջ ի վերջո հանգում և ազնվության, անողոքության, կրքի, թարմության, դիտողականության և այլն։

Մենք ամենեվին չենք ուզում ասել, թե Ուսպենսկու պրոբլեմն ընդհանուր առմամբ սպառված և կենինի կողմից։ Նա առաջինը չարաբար կծիծաղեր նման «ծույլ» պնդման վրա։ Այստեղ, ինչպես և ամենուրեք գրականագիտության բնագավառում, վիթխարի աշխատանք կա կատարելու։ բայց այդ աշխատանքը կարող և կատարվել միմիայն լենինյան ցուցումների հիման վրա։

Բայց ամենից ավելի կենինն ուզագրություն և դարձրել և Տոլստոյի ստեղծագործությանը ի՞նչն և զարմանալին էենինի մոտեցման մեջ՝ «ուսաւական յերկրի մեծ գրողին»։ Մենք քիչ հետազոտություններ չունենք Տոլստոյի մասին, վորոնք պատկանում են մարքսիստների գրչին և գրվել են կենինի հողվածներից առաջ ու հետո։ Նրանց մեջ կան այնպիսի արժեքավոր յերկեր, ինչպես Պեխանովի հողվածները։ Այդ բոլոր հետազոտողները Տոլստոյին մոտեցել են, իհարկե, դասակարգային տեսակետով։ Բայց,

Բնչակես են նրանք հասկացել այդ դասակարգային տեսակետը։ Նրանք Տոլստոյի մեջ տեսնում եյին նախ և առաջ արխտողիրատական աղնվականության ներկայացուցչին և աշխատում եյին տոլստոյականությունը բղխեցնել բացառապես աղնվականական քայլքայման ու կապիտալի գրո՞ի հանդեպ աղնվականական ուսակցիայի պայմաններից, Տոլստոյի «մուժիկայնությունը» նրանց համար մի տեսակ պարզամտություն եր, առաջին պաշտպանողական գծի, այսինքն դաստակերտային կուլտուրայի և կալվածատերերի դասակարգի սոցիալական ղեկավարության պաշտպանությունից հրաժարվելու հարկադրված աղնվականության պաշտպանի յուրատեսակ, վաղորոք պատրաստված դիրք։ Ի հարկե, այս ամենի մեջ քիչ չե ճշմարտության մասնիկը Այդպիսի տեսակետը շատ ավելի բարձր ե, քան Տոլստոյին ու տոլստոյականությունը «մարդկային խոճի շարժումով» բացարկելու կամ զրանք բացառիկ անձնական հանձարեղության արդյունք հայտարարելու կամ, ինչպես փորձում եյին անել վերջին տարիներս փորձալ սոները, Տոլստոյի ստեղծագործությունը նրան ժամանակակից զրական կյանքի ձևական ու կենցաղային պայմաններից բղխեցնելու փորձը։ Բայց այս համեմատաբար ձիշտ տեսակետն ել գդգույն ու աղոտ և ներկայանում, յեթե այն համեմատում ես կենինի համձարել վել ու ծության հետ։ Լենինի շնորհիվ Տոլստոյը վոչ միայն չգաղաքեց մեղ համար լինել աղնվականության ծիլը, այլ, իր այդ հատկությունը պահելով իրեւ քիչ լուրջ յելակետ, իր ստեղծագործության հսկայական հասակով նա խորապես հսմապատասխան զուրս յեկավ սոցիալական այն մեծ մոմենտի հետ, վորով այդ ստեղծագործությունը բնորոշվեց, և այն, ձիշտ ե, իր գիտակցությամբ հակառական և անկազ եակերպ գասակարգի հսկայական չափերի հետ, վորի արտահայտիչն եր հանդիսանում իրականության մեջ այդ ակոսը։ Դյուղական Ռուսաստանի բոլոր «հին հիմքերի» շեշտակի բեկանումը սրեց նրա ուշագրությունը, խորացրեց նրա շահակի բությունն իր շուրջը կատարվածի նկատմամբ, հանդեց նրա գրգությունն իր շուրջը կատարվածի նկատմամբ, հանդեպ իր ծնունդով և գաստիարակով աշխարհայեցողության բեկմանը, իր ծնունդով և գաստիարակությունը պատկանում եր Ռուսաստանի բարձրագույն կալվածատիրական ավագանուն, նա կապերը խզեց այդ միջավայրի կալվածատիրական ավագանունուն, նա կապերը խզեց այդ միջավայրի մեջ, բոլոր սովորական հայացքներից և, իր վերջին յերկերի մեջ, բոլոր սովորական հայացքներից և, իր վերջին յերկերի մեջ, կրքոտ քննադատությամբ հարձակվեց բոլոր ժամանակակից կրքոտ պատասխությամբ հարձակվեց բոլոր ժամանակակից պատասխական, յեկեղեցական, տնտեսական կարգերի վրա, վորոնք հիմնված եյին մասսաների ստրկացման, նրանց թշվառության, գյուղացիների և առնասարակ մանր տնտեսատե-

ըերի քայլայման, բոնության և յերեսպաշտության վրա, վորոնցով վերից վար տոգորված և վողջ ժամանակակից կյանքը»¹ Այս սոցիալական փաստը, վորը դրված և Տոլստոյի ստեղծագործության հիմքում, դաս ըստ կենինի, ամբողջ հին, ֆեոդալական ճորտատիրական նուևաստանի փոխարինումն և կապիտալիստական թուաստանի, իսկ այն դասակարգը, վորն իր վողջ սոցիալական հոգեբանությամբ վորոշեց Լ. Տոլստոյի մոնումենտալ և սրենույն ժամանակ խորապես հայաստական, միաժամանակ հեղափոխական և ռեակցիոն իդեոլոգիան, դա զյուղացիությունն է:

Լենինը Տոլստոյին քիչ աշխատություն չի նվիրել Այդտեղ մենք գտնում ենք և կեզ Տոլստոյը վորպես ուստական հեղափոխության հայելին» հոդվածը, վորը նախ տպագրվեց Բ'ՍԴԲԿ Պետերբուրգի և Մոսկվայի կոմիտեների որգան «Պրոլետար» թերթում 1908 թվին ժնեկում, հետո Տոլստոյի հիանալի նեկրոլոգը, վորը մեծ զրոյի մահից անմիջապես հետո տպագրվեց Բ'ՍԴԲԿ կենտրոնական որգան «Սոցիալ-դեմոկրատ»-ում (յերկու հոդվածներն ել տպագրվել են առանց ստորագրության), «Եվկ Տոլստոյը և ժամանակակից բանվորական շարժումը» հոդվածը, վորը տպագրվել եւ «Հաշ պուտ» թերթում 1910 թվին, «Վերապահության հերոսները», հրատարակված նույն թվին «Մայձու» ժուրնալում, վորը խարանում և «անսկզբունքայնության շշմեցուցիչ որինակներ» թողած մենշևիկի-լիկվիդատորների կատակները Տոլստոյի նկատմամբ, և. Ն. Տոլստոյը և նրա եպօխանք հոդվածը, վորը վորոշ չափով ամփոփում է Լենինի իդեաները Տոլստոյի մասին և վորը տպագրվել եւ 1911 թվին «Յանձն» ժուրնալում:

Տոլստոյի մասին Լենինի հայացքների շարադրումն ավելի կուռ դարձնելու նկատառություն, հայացքներ, վորոնք վիթխարի նշանակություն ունեն վողջ գրականագիտության հետագա ուղիների համար, մենք նախ կանգ կառնենք այս վերջին հոդվածի վրա: Այստեղ մենք կարդում ենք. «Այն եպօխանք, վորին պատկանում է Լ. Տոլստոյը և վորը հիանալի ուղիներությամբ անդրագարձել եւ ինչպես նրա հանճարեղ գեղարքեստական յերկերում, այնպես ել նրա ուսմունքի մեջ, 1861 թվից մինչև 1905 թվականը ընկնող եպօխանք եւ: Ճիշտ եւ, Տոլստոյի գրական գործունեցությունը սկսվել եւ ավելի առաջ և վերջացել ավելի ուշ, քան սկսվել յեկ վերջացել եւ այդ շըջանը, բայց Լ. Տոլստոյը վորպես գեղարքեստագետ և վորպես մտածող կազմավորվել է հենց այդ շրջանում, վորի անցութային բնույթը ծնունդ տվեց թե՛ Տոլս-

¹ ЛЕНИН, Л. Н. Толстой и современное рабочее движение, т. X|V, стр. 405.

տոյի յերկերի և թե՛ «տոլստոյականության» ոոլոր առաջբերիչ գծերին: «Աննա Կարենինա» վեպում կ. Լեվինի բերանով Լ. Տոլստոյը չափազանց վառ կերպով արտահայտել է, թի վորն եր ոուստական պատմության շրջադարձն այդ կես զարում... «Թոսակցությունները բերքի մասին, բանվորներ վարձելու մասին յեկային, վորը կեվինը գիտեր, վոր ընդունված եւ ինչ վոր շատ ցածրը բան համարել... այժմ կեվինի համար կարեվոր եյին թվում»: «Ետա, թերեկո, կարեվոր շեր ճորտատիրական իրավունքը որոք, կամ կարեվոր չեր Անգլիայում: Յերկու գեպքում ել բուն պայմանակերը վորոշը մեզ սոտ այժմ, յերբ այս ամենը շուռ ե յեկել և լոկ դասավորվում ե, այն հարցը, թի ի՞նչպիս են գոյանում այդ պայմանները, միակ կարեվոր հարցն և մուսաստանում, մտածում եր լենինը...»:

«Մեզ մոտ այժմ այս ամենը շուռ ե յեկել և լոկ դասավորվում են,—զմակար և պատկերացնել 1861—1905 թվականների ավելի դիպուկ բնութագրություն (այսպես և մեկնաբանում լենինը իր հոդվածում Տոլստոյի հերոսի մտքերը.—Ա. Լ.): Այն, ինչ շշուռ ե յեկել», լավ հայտնի յե կամ, առնվազն, լիովին ծանոթ ե յուրաքանչյուր ոուսիր Դա ճորտատիրական իրավունքն և և նրան համապատասխանող վողջ «Հին Կորպը». Այն, ինչ «լոկ դասավորվող» բուրժուական կարգը գծվում ե աղոտ կերպով, խրտվիլակի ձեվով—Անգլիա: Հենց խրտվիլակի, վորով հետեւ այդ Անգլիայի համարակարգի հիմնական գծերը, կապիտուլի տիրապետության, փողի գերի, փոխանակության յերեվան գալու և զարգացման հետ այդ կարգերի կամը պարզելու ամենա մի փորձ Տոլստոյը ժիւառում է, այսպես ասած, սկզբունքը իրեն: Նարոդականությունների նման նա չի ուզում տեսնել, նա աչքը փակում ե, յերես և զարձնում այն մտքից, թե Ռուսաստանում գդասավորվում ել վոչ ալ ինչ յեթե վ չ բուրժուական կարգեր: Արդարեկի, 1861—1905 թ. թ. շըջանի համար (նույնպես և մեր ժամանակի համար) Ռուսաստանի վողջ համարակական—քաղաքական գործունեցության ամենաբարձր ականքի տեսակետից յեթե վոչ «Արական կարեվոր», ապա կարեվորվույն հարցն այն եր, թե ինչպիս և կը գասագորվեն» այդ կալ գերը, բուրժուական կարգերը, վորոնք խիստ բազմագան ձեր եյին ընդունել «Հնդկիայում», Դերմանիայում, Ամերիկայում, Ֆրանսիայում և այլն: Բայց Տոլստոյի համար հարցի այդպիսի վորոշակի, կոնկրետ պատճական գրումը միանդամայն ոտար բան ե: Նա դատում է կերպականորեն, նա

Թույլ ե աալիս միայն բարոյականության «ավիտենական» սկզբանքների, կրոնի հավիտենական սկզբանքների տեսակետը, չըգիտակցելով այն, վոր այդ տեսակետը լոկ իդեոլոգիական անդրադարձումն ե հին («շուռ յեկած») կարգերի, և լրտատիրական կարգերի, արեվելյան ժողովուրդների կյանքի կարգերին:

Սիանգամայն վորոշակիորեն ընդգծելով, վոր Տոլստոյի ուսումունքը պետք է սոցիալիստական համարել, կենինը սրբնության ժամանակ, սակայն, այն համարում է ուտոպիական և ռեալիզիոն: Նա այդ մասին ասում է. «Ահա հենց արեվիլյան կարգերի, ասի-ական կարգերի իդեոլոգիա յե հանդիսանում տղթականությունն իր ռեալ պատմական բովանդակությամբ: Այստեղից և ասկետիզմը, և բանությամբ չարին չհակառակելը, և պեսիմիզմի խորը շեշտերը, և այն համոզմունքը, թե «ամեն ինչ վոչինչ է, ամեն ինչ նյութական՝ վոչինչ է» («Օ Ըմալե Հիզնի», եջ՝ 52), և հավատքը «վոգու», «ամեն ինչի սկզբի» հանդեպ, վորի նկատմամբ մարդը լոկ «իր հոգու փրկության գործին դրված» «աշխատավոր» և և այլն: «Գեսիմիզմը, չհակառակելը, «վոգու» առկոչումը մի իդեոլոգիա յե, վորն անխուսափելիորեն յերեվան և գալիս այնպիսի եպօխայում, յերբ վողջ հին կարգերը «ջուռ են յեկել», և յերբ այդ հին կարգերում գաստիարակված, մոր կաթի հետ այդ կարգերի սկզբունքները, սովորույթները, տրադիցիաները, հավատալիքները ներծծած մասսան չի տեսնում և չի կարող տեսնել, թե ի՞նչպիսին են նոր «կազմավորվող» կարգերը, վո՞ր հասարակական ուժերը և ինչպես են այն «կազմավորում», վո՞ր հասարակական ուժերն ընդունակ են փրկություն բերել «բեկման» եպօխաներին հատուկ անհամար, առանձնապիս սուրբ աղետներից... Տոլստոյի ուսմունքն անպայման ուտոպիական են, իր բովանդակությամբ, ռեալիզիոն՝ այդ բառի ամենաճիշտ և ամենախորը նշանակությամբ: Բայց ամենեվին չի հետեւում այն, թե նրա ուսմունքը սոցիալիստական չեր, վոչ ել այն, թե նրա մեջ չկային քննադատական այնպիսի տարրեր, վորոնք ընդունակ են արժեքավոր նյութ հայթայթել առաջապորդակարգերի լուսավորության համար»²:

Այդ նույն հողվածում, վորը գրքել և արգեն այն բանից հետո, յերբ ամեն տեսակ լիքերալներ, նարոդնիկներ և միսս իկ-ներ փորձում երին Լեզ Տոլստոյի մահով առաջացած մեծ շարժումն ոգտագործել իրենց նպատակների համար, լենինն առանձ-նապես խստիվ ընդգծում ե, վոր տոլստոյականության սոցիալա-

¹ ЛЕНИН-Л. Н. Толстой и его эпоха, т. XV, стр. 100.

² Там же, стр. 104.

ჭან բովանդակության նշանակությունը անցյալին և վերաբեր-
քում և վոր ներկայի համար այդ ուսմունքի վողջ եյությունը
բացասական է, իսկ ամեն մի կոկետությունը տոլստոյականու-
թյան նկատմամբ պըոլետարական աշխարհայեցողության կող-
մանքի համար իսկական հանցագործություն և հանդիսա-
նում: «Քառորդ դար սրանից առաջ Տոլստոյի ուսմունքի քննա-
դատական տարրերը կարող եյին գործնականում յերբեմն
ոգուտ բերել ազգաբնակության մի քանի խավերին՝ հա-
կառակ տոլստոյականության ուսակցիոն և ուսուպիսական
գծերին: Դիցուք վերջին տասնամյակի ընթացքում դա այդ-
պես լինել չեր կարող, վորովհետեւ պատմական զարդացումը քիչ
չգնաց առաջ 80 ական թվականներից մինչև անցյալ դարի վեր-
ջը: Իսկ մեր որերին, այն բանից հետո, յերբ վերեվում մեր մատ-
նանշած մի շարք զեպքերը վերջ դրին արեվելյան անշարժու-
թյանը, մեր որերին, յերբ այնքան զիթխարի աարածում են ու-
նեցել «վեխականների» գիտակցաբար հետազիմական, նեղ դա-
սակարգային, շահամոլական-դասակարգային իմաստով հետազի-
մական իդեաները լիբերալ բուրժուազիայի մեջ,—յերբ այդ իդե-
աները վարակել են նույնիսկ համարյա թե մաքսիստների մի
մասին, «լիկվիդատորական» հոսանք ստեղծելով,—մեր որերին
Տոլստոյի ուսմունքն իդեալականացնելու, նրա «չհակառակելը»,
նրա՝ «վոգու» առդիմումը, «բարոյական ինքնակատարելագործ-
ման» նրա կոչերը, «խոճի» և ընդհանրական «սիրո» նրա վար-
գապետությունները, ասկետիզմի ու կվիետիզմի նրա քարոզուները
և այլն արդարացնելու կամ մեղմացնելու ամեն մի փորձ ամենա-
անմիջական ու ամենախորը վիճան և բերում»:

«Ծոլստոյը և նրա հպոխան» հոդվածը տալիս ե հաստատուն
ու հստակ ռեզյումե, Տոլստոյի ընդհանուր գնահատականը՝ ինչ-
պես գենետիկ կողմից, այսինքն այն ուժերի տեսակետից, վո-
րոնք ծնունդ տվին Տոլստոյի ստեղծագործությանը, այնպես ել
փունք ծնունալ տեսակետից, այսինքն՝ այն ներգործության իմաս-
տով, վոր կարող եյին ունենալ Ծոլստոյի յերկերն իրենց գոյսւ-
առով, վոր կարող եյին ունենալ Ծոլստոյի յերկերն իրենց գոյսւ-

¹ ЛЕНИН Л. Н. Толстой и его эпоха, т. XV, 103.

վածում լենինը յելնում և հպղխայի սահմանումից և բնութառ գրությունից: Մեթոդաբանոքն նա այստեղ սովորեցնում և իրոք խոշոր և սոցիալապես նշանակալի գրական յերեվոյթին մտենալիս՝ ճշտիվ սահմանել նրա կենդանի, հասարակական ժամանակագրությունը, այսինքն՝ սոցիալական յերեվոյթների այն կապը, վորը հնատագուտիր որեկտի պատմական նողն և հանդիսանում: Այսուհետեւ, պետք և բռնել հիմնական ողակը դեպքերի այս ներհյուսման մեջ և գտնել, թե ինչպես և նա, այդ գերիշխող ուղակն անդրադարձել իղեղովիայի զերիշխող զծերի մեջ, իսկ դրանով, իհարկե, նաև հնատագուտելի յերկերի ձեվի մեջ: Բայց հենց Տոլստոյի մասին լենինի գրած առաջին հոդվածի պրակտիկան սովորեցնում և այլ մոտեցման հնարավորությունը: Այստեղ լենինը սկսում և Տոլստոյի բուն ստեղծագործության կառուց վածքի հանճարեղ վերլուծությունից, նրա հիմնական բնույթուն նրա հիմնական հակասությունների բացահայտումից և, արդեն այստեղից յելնելով, հքսկուրսիա յի կատարվում այն սոցիալական պայմանների բնագավառը, վորոնք ծնունդ են տվել և չելին կարող ծնունդ շտալ այդպիսի արդյունքի:

Նա սկսում է Տոլստոյի ուսմունքի մեջ յեղած հակասությունների շարադրումից չի կարելի, չի հաջողվի «խացենի այն հարցը ուղիղ և հստակ պատասխանի պահանջը, թե ինչից են առաջանում «տուսոյականության» ազաղակող հակասությունները, մեր հեղափոխության վո՞ր թերություններն ու թուրություններն են արտահայտում նրանք: Հակասությունները Տոլստոյի յերկերում, հայացքներում, ուսմունքների մեջ, շկզայում իրոք ազաղակող են: Մեկ կողմից, հանճարեղ գեղարվեստագետը, վորը տվել և վոչ սիայն ուսւական կյանքի անզուգական պատկերներ, այլև համաշխարհային գրականության առաջնակարգ յերկեր: Մյուս կողմից՝ Քրիստոնով իւնթացած կալվածատերը՝ Մեկ կողմրց՝ հիմնալի ուժեղ, անձիջական ու անկեղծ բողոք ընդուժելու հասարակական ստի և կեղծիքի, — յուս կողմից՝ «տոլստոյականը», այսինքն՝ մաշված, հիստերիկ նվացողը, վոր ուսւական ինտերիգենտ և կոչվում, վորը, հրապարակով իր կուրծքը ծեծելով, ասում ե. «յես պիղծ եմ, գարշելի, բայց յես զբաղվում եմ բարյական ինքնակատարելագործմամբ, յես այլևս միս չեմ ուստում և մնջում եմ բրնձի կոտլետներով»: Մեկ կողմից՝ կապետալիստական շահագործման անխնա քննադատություն, կառաւ վարական բռնությունների, գատարանի ու պետական կառավարման կոմեգիայի մերկացում, հարստության աճման ու քաղաքական թության նվաճումների և ազգայտության աճման, բանվորական մասսաների վայրենացման ու տանջանքների հակասություն-

ների վողջ խորության բացում: Մյուս կողմից՝ բռնությամբ ճաշրին չհակառակելու» խենթ քարոզ: Մեկ կողմից՝ ամենազգացուած ուաշիզմ, բոլոր և ամեն տեսակ զիմակների զերծում: — մյուս կողմից՝ աշխարհիս ամենազծուծ բաներից մեկի, այն ե՝ կրոնի քարոզ, ձգտում՝ պետական պաշտոնով տերտերների տեղը զնելու բարոյական համոզմունքով տերտերներին, այսինքն մշակելու ամենանուրբ և այդ պատճառով ել առանձնապես գ սրշելի տերտերականություն: Իրոք վոր՝

«Դու և աղքատ ես և լիառատ,

Դու և հղող ես, և անդր,

— Մայր մուաստանաւ:

Նշելով այնուհետեւ, վոր այս տարորինակ շիլա շփոթի մեջ վոչ մի կերպ չի կարելի տեսնել ուսւական բանվորական հեղափոխության հայելին, լենինը գինուսւմ ե, թե ինչպիսի հեղափոխություն և անդրադարձել այս պղտոր ու անհարթ հայելու մեջ, և ասում ե. «... Հակասությունները Տոլստոյի հայացքների և ուսմունքների մեջ պատահականություն չեն, այլ արտահայտությունն այն հակասակ սն պարմանների, վորոնց մեջ զտնվում եր XIX զարի վերջին յերեսնամյակի ուսւական կյանքը: Նահապետական գյուղը, յերեկ միայն ազատագրված ճորտատիրական իշրավունքից, հանձնված եր կապիտալին և պետական գանձարանին հեղեղելու և թալանելու համար: Գյուղացիական տնտեսության և գյուղացիական կյանքի հին հիմքերը, հիմքեր, վօրոնք իրոք գիմացել եյին դարերի ընթացքում, անսովոր արագությամբ սկսեցին խորտ սկվել: Տոլստոյի ստեղծագործության հիմնական շարժիչն և հանդիսանում, ըստ լենինի, այն բողոքը և առաջ շարժվող կապիտալիզմի, մասսաների քայքայման և հոգացրկման գեմ, վորին պետք և ծնունդ տար նահապետական ուսւական գյուղը: Դրանով և վորոշվում նաև գրողի նշանակությունը: «Տոլստոյը ծիծակելի յի իրեկ մարդկության փրկության նոր դեղատումսիր գտնող մարգարե, — և այդ պատճառով միանգամայն վողորմելի յեն արտասահմանյան և ուսւական «տոլստոյականները», վորոնք ցանկանում են զողմայի վերածել նրա ուսմունքի հենց ամենաթույլ կողմը: Տոլստոյը մեծ ե, իրեկ այն իշեաների և այն տրամադրությունների արտահայտիչ, վօրոնք գոյացել եյին ուսւական բազմամիլիոն գյուղացիների մեջ՝ Ռուսաստանում բուրժուական հեղափոխության վրա համելու ժամանակները: Տոլստոյն որիգինալ ե, վորովինալ նրա հայացքների ամբողջությունը, վօրոնք՝ իրեկ ամբողջ՝ վնասակար են, արտահայտում և հենց մեր հեղակույթյան առանձնահատկու-

Թյունները, իբրև զյուղացիական բուրժուական հեղափոխություն։ Այդ բողոքը նրան հարազատ դարձրեց գյուղացիությանը, և գյուղացիական տրամադրությունների հզոր տարերքը աֆ-րապետեց Տուստոյին։

Բայց այդ դիրքերն արդյո՞ք իրոք հեղափոխական դիրքեր
են հանդիսանում: Վաչ, նրանք յերկյակ են, և վերջինս կենքը
բաց և անում նույն դիալեկտիկական վերլուծության ոգնու-
թյամբ: «Մեկ կողմից, —ասում ե Լենինը, —ճորտատիրական
հնչման հարյուրամյակները և հետուեֆորմյան ուժեղ քայլայման
տամնամյակները ատելության, զայրույթի և հուսահատ վճռա-
կանության լեռներ եյին կուտակել», —«Ճյուս կողմից, զյու-
ղայիշությունը, ձգտելով հանրակեցության նոր ձևերի, շատ ան-
դիտակցաբար, նահապետորեն, խենթի պես եր վերաբերվում այն
բանին, թե ինչպես ե լինելու այդ հանրակեցությունը, ինչպիսի
պայքարով պետք ե ազատություն նվաճել, ինչպիսի զեկավար-
ներ կարող ենա ունենալ այդ պայքարում, ինչպես են վերա-
բերվում զյուղացիական հեղափոխության շահերին բուրժուա-
զիան և բուրժուական ինտելիգենցիան, ինչնու անհրաժեշտ ե ցա-
րական իշխանության բոնի տապալումը կալվածատիրական հո-
գատիրության վոչնչացման համար: Դյուլացիության վողջ անց-
յալ կյանքը նրան սովորեցրել եր ատել բարինին և չինովնիկին,
բայց չել սովորեցրել և չեր կարող սովորեցնել, թե փարաեզ փընտ
ռել բոլոր այդ հարցերի պատասխանը: Դյուղացիության մի
փոքր մասը միայն այդ հարցերը լուծում եր հեղափոխական
կողմով: «Դյուղացիության մեծ մասը լուիս եր և աղոթում, խել-
քին զոռ եր տալիս և յերազում, ազերսագրեր եր գրում և «Ելքնդ-
րաբեկուներ» առաջում, —միանգամայն կել Նիկոլայեվիչ Տոլստո-
յի վստով: Յեկ ամփոփում: «Տոլստոյն անդրադարձեց ցավաս
ատելությունը, հասունացած ձգտումը լավագույնին, անցյալից
ողատագրվելու ցանկությունը, —և յերազկոտության, քաղաքա-
կան անդաստիարակության, հեղափոխական փափկամորթության
հասությունը»¹:

Այսից ավելի ջերմորեն, Տոլստոյի համար ամենից ավելի զբականորեն լենինը գրել և նրա նեկրոլոգը։ Բայց վիթխարի ռխաւ կիխներ յերեվակայել, թե իբր մեծ ծերունու մահից, այսպես ասած, հուզված, Վլադիմիր Իլյիչը ծռվել և զբական զնակառության կողմը։ Այդ գնահատությունը, ինչպես բոլոր մյուսները լենինի մոտ, բազմակողմանի յեւ և դիալեկտիկական։ Ցեթե

ЛЕНИН «Лев Толстой как зеркало русской революции», т. XII, стр. 832-834.

Տուստոյի մասին լենինի մեր ժեզ բերած հողվածում առանձնապես
ընդգծված են նախապուշտացումը վորեն չափով առևտոյականու-
թյանը տարվելուց, ապա այս ամենից չի հետեղութ, թե դրանով ի-
բակ չնշվում են այն բարձր գովասանքները, Տուստոյի գելարվես-
տական յերկների այն բարձր գնահատականը, վորը տրված է նեկ-
ուորդի մեջ: «Աննա Կարենինա»-յի և Ժողովրդական պատմվածք-
ների հեղինակը նկարում և «1861 թվից հետո ել կիսաճորտա-
տիրության մեջ մնացած Ռուսաստանը, գյուղական Ռուսաստա-
նը, կալվածատիրոջ և գյուղացու Ռուսաստանը»: «Նկարելով այդ
քրջանը, Ռուսաստանի պատմական կյանքում, Լ. Տուստոյը կարո-
ղացավ իր աշխատությունների մեջ դնել այնքան մեծ հարցեր,
կարողացավ բարձրանալ այնպիսի գեղարվեստական ուժի աս-
տիճանի, վոր նրա յերկերն առաջին տեղերից մեկը գրափեցին
համաշխարհային գեղարվեստական գրականության մեջ: Հեղա-
փոխության նախապատրաստման եպոխան ճորտաերերի ճգմած
յերկրներից մեկում Տուստոյի հանճարեղ լուսաբանության շնոր-
հիվ հանդես յեկավ իրեն մի քայլ դեպի առաջ վողջ մարդկության
գեղարվեստական գարգացման մեջ^{1:}

Այս գնահատականը մեթոդաբանական վիթխարի արժեք
ներկայացնող մի պնդում և պարունակում: «Քայլը գեղի առաջ
վողջ մարդկության գեղարգեստական զարգացման մեջ» այսուեղ
ընդունվում է իրեւ արդյունք յերկու գործոնների: Հիմնականն
և հանդիսանում այն հակայական նյութը, վորն այսպես տաճած ին-
քըն իրեն առաջադրում և գեղարգեստորեն արտահայտվելու հա-
մար: Այդ կարգի հասարակական մեծ նյութը, վոր համաժարդկա-
յին արժեք ունի, ինչպես յերեսում և կենինի խոսքերից, առաջ յե-
շինուած այնտեղ, վորտեղ լայն չափով նախապատրաստված և խո-
րը հեղափոխությունը: Յերկրորդ գործոնն և հանդիսանում «հան-
ձարեկ լուսաբանությունը», այսինքն՝ այդ նյութի բարձր գեղար-
գեստական ձևափորումը:

Այստեղից կարելի յե անել այսպիսի յեզրակացություն. յե-
թե կա բիորդիորեն հանճարը, այսինքն՝ բնական ձիրքերի այն
վողջ գումարը, վորը, գիցուք, ուներ և. Տուժառյը, բայց չկա սո-
ցիալական մեծ նյութը, —ապա մարդկային արվեստը մի քայլ չէ
անի դեպի առաջ, լավագույն գեղքում մենք կունենանք ձեզ
ձարտար վարպետ, վորը կկրկնի ինչ-վոր անցածը կամ, բովան-
դակության բացակայության պատճառով, կսկսի ձևական վար-
ժություններ կատարել: Նու, իսկ յեթե մեծ բովանդակությունը
կա, իսկ հարմար հանճար չկա:

¹. ЛЕНИН. «П. Н. Толстой», т. XIV, стр. 400.

Հարցն այդ կերպ դնելը ճիշտ չեւ, ինչպես յերևում եւ արդեն էնց իր՝ լենինի ասածներից, միայն Տոլստոյը չեւ, վոր ողտվել եւ մերուիշշալ մեծ նյութից. յեթե տանք միայն առաջնակարգ գրողների անունները, ապա, առանց հետանալու իր իսկ լենինի բնութագրություններից, կարելի յեւ մատնանշել Սալտիկով-Շեղրինին և Գլեք Ուսպենսկուն: Իսկ առևասարակ հասարակության ընդերքում արդեն կազմավորվող նոր մտածելակերպի ու նոր զգալակերպի համար հանձարեղ ձայնատարի առկայության հարցը լուծվում եւ այն հանգամանքով, վոր բիոլոգիորեն տաղանդավորության քանակը, ձիրքերի քանակը նատուրալ տեսակետից յուրաքանչյուր տվյալ եպոխայում պետք եւ մոտավորապես հավասար լինի, բայց միայն խուլ, գորզ հպոխաներն իրենց ձիրքերի մեծ մասին թոռությունում են, իսկ վառ, հեղափոխական եպոխաները (հատկապես հեղափոխության նախապատրաստման զբանում), յերբ գեղարվեստորեն իդեոլոգիական ձևակերպումները միակ հնարավոր ձևակերպումներն են լինում, քանի վոր լայն ձևերով ակտիվ քաղաքական ստեղծագործության ժամանակը դեռ չի հասել, — առանձացնուած են հատկապես մեծ քանակությամբ տաղանդներ, վորոնց հարուստ կերպով բեղմնավորել եւ բուն իսկ եպոխան:

Այսուհետեւ լենինի մոտ հետեւում են Տոլստոյին փառարանող բազմանշանակալից տողեր. «Տոլստոյ գեղարվեստագետը չընչին փոքրամասնությանն եւ հայտնի նույնիսկ Ռուսաստանումներա մեծ յերկերն իրոք բոլորի սեփականությունը դարձնելու համար հարկավոր եւ պայքար եւ պայքար ընդդեմ այնպիսի հասարակակարգի, վորը միլիոնավորների և տասնյակ միլիոնավորների դատապարտել եւ խափարի, փակվածության, տաժանակիր աշխատանքի և թշվառության, հարկավոր եւ սոցիալիստական հեղաշըրջում: Ենք Տոլստոյը տվեց գեղարվեստական յերկեր, վորոնք միշտ կգնաճատվեն և կկարգացվեն մասսաների կողմից, յերբ նրանք իրենց համար մարդավայել կյանքի պայմաններ կստիղծեն, տապալելով կալվածատերերի և կապիտալիստների լուծը, — այլև նակարողացավ հիանալի ուժգնությամբ հաղորդել ժամանակակից կարգերից ճնշված լայն մասաների տրամադրությունը, ուրվահակարել նրանց դրությունը, արտահայտել նրանց բողոքի և զայռույթի տարերային զգացումը»¹.

Մինույն ժամանակ լենինը վոչ մի պահ աչք չի փակում Տոլստոյի սահմանափակության հանդեպ: Նա ասում եւ. «Բայց չերմ բողոքողը, կը քո մերկացնողը, մեծ քննադատը դրա հետ

մեկտեղ իր յերկերի մեջ յերեան հանեց Ռուսաստանի վրա շարժվող ձգնաժամի պատճառների և ճգնաժամից գուրս գալու միջոցների այնպիսի անհասկացողություն, վորը յուրահատուկ եւ միայն նահապետական, միամիտ գյուղացուն և վոչ թե յեկըռպական կը թության տեր գրողին»²:

Նեկըռուգի մեջ մենք ունենք մեր վողջ գրականագիտության համար չափանից կարելոր մի դրույթ ևս. «... Տոլստոյի ճիշտ գնահատմականը, — գրում ե լենինը, — հնարավոր ե միայն այն գասակարգի տեսակետով, վորն իր քաղաքական դերով և իր պայքարով այդ հակասությունների առաջին լուծման ժամանակ, հեղափոխության ժամանակ, ապացուցեց ժողովրդի ազատության և սասաներին շահագործումից ազատագրելու համար մզվող պայքարում առաջնորդ լինելու իր կոչումը, — ապացուցեց իր անձ նուրաց նվիրվածությունը գեմոկրատիայի գործին և բուրժուական (այդ թվում նաև զյուղացիական) զեմոկրատիայի սահմանափակության ու անհետելվողականության դեմ պայքարելու իր ընդունակությունը, — հնարավոր ե միամիտ սոցիալ-դեմոկրատական պրոլետարիատի տեսակետով»²:

Զի կարելի այստեղ չբերել մի մեծ քաղվածք «Լ. Տոլստոյը և ժամանակակից բանվորական շարժումը» հոդվածից, վորի մեջ փոքրիչ չթագնված ձեզով դրված ե լենինի ուսմունքը գրական ստեղծագործության մեջ՝ հասարակական բովանդակության և գեղարվեստական ձեզի փոխհարաբերության հարցի ժամանակ: Լենինն ասում ե. «Տոլստոյի քննադատությունը նոր չեւ: Նա չի ասել այնպիսի մի բան, վորը նրանից շատ առաջ, թէ յելքուական և թէ ուստական գրականության մեջ, ասած չինեն նըրանք, ոչքեր յեղել են աշխատավորության կողմը: Բայց Տոլստոյի քննադատության յուրահատկությունը և նրա պատմական նշանակությունն այն ե, վոր նա այնպիսի ուժով, վորը հատուկ ե միամիտ հանճարեղ գեղարվեստագետներին, արտահայտում ե հիշյալ շրջանի Ռուսաստանի և նենց զյուղական, գյուղացիական Ռուսաստանի ժողովրդական ամենալայն մասսաների հայացքների բեկումը: Վորովինտեղի ժամանակակից կարգերի քննադատությունը Տոլստոյի մատ ժամանակակից բանվորական շարժման ներկայացուցիչների կողմից այդ նույն կարգերի քննադատությունից տարբերվում ե նենց նրանով, վոր Տոլստոյը կանգնած ե նահագետական, միամիտ գյուղացու տեսակետի վրա: Տոլստոյը նրա հոգեբանությունը փոխադրում ե իր քննադատության, իր

¹ ՊԵՆԻՆ—«Լ. Ի. Տոլետօյ», Դ. XIV, էջ. 401.

² Ներյն տեղաւում, էջ. 402:

ռումունքի մեջ: Տոլստոյի քննադատությունը նրա համար և աչքի ընկնում զգացումների այդպիսի ուժով, այդպիսի կրքոտությամբ, համոզողականությամբ, թարժությամբ, անկեղծությամբ և մինչև արժատը հասնելու, մասսաների դժբախտության իսկական պատճառը գտնելու ձգտման անվախությամբ, վոր այդ քընուադատությունն իրոք անդրադարձնում և ույն միշտոնավոր գյուղացիների հայացքների մեջ տեղի ունեցած բեկումը, վրոնք և նոր եյին ազատագրվել ճորտափրական իրավունքից տեսնում եյին, վոր այդ ազատությունը նշանակում և քայլայման, սովորականության, անտուն կյանքի նոր սարսափներ քաղաքային «խարդախների, մեջ և այլն: Տոլստոյը նրանց տրամադրությունն անդրադարձնում և այնքան ճշգրիտ, վոր ինքն իրուսմունքի մեջ մտցնում և նրանց միամտությունը, նրանց խորթացումը քաղաքականությունից, նրանց միստիցիզմը, աշխարհից հեռանալու ցանկությունը, «չարին չհակառակելը», անգործովքները կապիտալիզմի և «փողի իշխանության» հասցեին: Միլիոնավոր զյուղացիների բողոքը և նրանց հուսահատությունը, —ահա թե ինչն և միախառնվել Տոլստոյի ուսմունքի մեջ»¹

Այս նշանավոր քաղվածքի մեջ պետք և տարբերել յերկու միտք. Տոլստոյն անդրադարձնում և նրանց տրամադրությունը, վորոնց արտաճայտիչն և հանդիսանում ինքը, և «այնքան ճշգրիտ», վոր իդեոլոգիական տեսակետից նույնիսկ փշտցնում Եթուսմունքը, վորովհետեւ բողոքը նրա մոտ միահյուսված եղուրս գալիս հուսահատության հետ, տարբեր բանվորական շարժումից, վորը լեցուն և բողոքով, բայց խորթ և հուսահատությանը: Ի հարկե, հասարակական բովանդակության տեսակետից, եփեկտի հեղափոխականության, ներգործության մաքրության տեսակետից այդպիսի «ճշգրտությունը» Տոլստոյին տալիս և «զգացմունքի ուժք, կրքոտություն, համոզողականություն, թարժություն, անկեղծություն, անողոքություն», իսկ այս ամենը կենինի կարծիքով հանդիսանում և Տոլստոյի գլխավոր արժանիքը. վորովհետեւ «Տոլստոյի քննադատությունը նոր չե, այսինքն՝ յեթե Տոլստոյը իրայդ քննադատությունը շարադրեր առանց կրքի այդ ուժի, նավչինչ չեր ափելացնի կուլտուրայի վրա: Իսկ կրքի ուժի առաջությամբ նրա «վոչ նոր», բայց չափազանց նշանակալի «քընադատությունը» յեղափ «մի քայլ առաջ ամբողջ մարդկության արքեստի վերը մեջ: Ընթերցողից չի վրիպի կենինի այս դատողության վողջ վիթխարի կարելորությունը:

1. ЛЕНИН. Л. Толстой и современ. рабоч. движение. т. XIV, стр. 405.

Տոլստոյի մասին կենինի գրած հողվածները կարիք ունեն ճամատուկ ակնդեմական քննության. նրանք այն ամենում, ինչ զիշտվություն ե, սպառիչ մեկնաբանություն. են տալիս այնպիսի հսկայական գրական և հասարակական մի յերեկությի, ինչպիսին են Տոլստոյի ստեղծագործությունը և ուսմունքը, հանդիսանալով գրականգիտության նկատմամբ կենինի մեթոդի գործագուման փայլուն որինակել:

Համեմատաբար քիչ և գրել կենինը ժամանակակիցների մասին: Այստեղ նրա ուշադրությունը հատկապես գրավել է Մ. Գորեկու հակայական ֆիզուրան: Կենինը նրա մեջ տեսնում էր մեծ գրողի, իր ստեղծագործության ուղղությամբ հիմնականում պրոգրամական գրողի: Նա ուրախացավ, վոր Գ. Ի. Կին կազմակերպչորեն ևս միացավ բոլշևիկներին: Նա խորապես վշտացավ, վոր, կուսակցության մեջ յեղած ժամանակ, Գ. Ի. Կին վորոշ մոլորությունների մեջ ընկալ (նրա «Վակերյողականներին» միանալը և այն ամենն, ինչ կապված եր գրահետ): Բայց կենինը յերբեք չի հրաժարվել Գորեկուց, նրա նկատմամբ միշտ ցուցաբերել եր ընկերական նախազգուշացում, և յեթե յերբեմն պայքարել եր նրա զեմ, ապա այդ պայքարն ըստ եյության յեղել եպայքար «Գորեկու համար»: Ալեքսեյ Մաքսիմովիչին ուղղված 1909. թվի մի նամակում կենինը գրում եր. «Գեղարվեստագետի ձեր տաղանդով գուր Ռուսաստանի — և վոչ միայն Ռուսաստանի — բանվորական շարժմանն այնքան վիթխարի ոգուտ եք բերել, դուք գեռ այնքան ոգուտ կերեք, վոր վոչ մի զեպքում ձեզ համար թույլատրելի չե անձնատուր լինել այն ծանր տրամադրություններին, վորոնց ծնունդ են տալիս արտասահմանյան պայքարի զրվագները: Այնպիսի պայմաններ են լինում, յերբ բանվորական շարժման կյանքն անխուսափելիորեն ծնունդ ետական այդ արտասահմանյան պայքարին ու պառակտումներին, խօսքական շարժումը ներքուստ թույլե և սոցիալ-դեմոկրատիան ներքուստ սխալական ե, այլ նրա համար, վոր չափազանց այլածավալ են այն տարբերը, վորոնցից բանվոր գտամակարեն հարկադրված ե կոտիելու իր կուսակցությունը: Կկոփի, համեմայն զեպս կկոփի հիմանալի հեղափոխական սոցիալ ղեմոկրատիա Ռուսաստանում, կկոփի ավելի զուտ, քան թվում եր յերբեմն յերեցս նպովյալ վտարանդիւթյան տեսակետից, կկոփի ավելի այլելի առուղագեա, քան այդ պատկերանում ե, յեթե դատելու լինենք մի քանի արտաքին գրակորումներով և առանձին զրվագներով...»²

1. ЛЕНИН, «Два письма А. М. Горькому», т. X|V, стр. 189.

Յերբ բուրժուական մամուլը սկսեց, իբրև «ամենասենսացիոն» մի նորություն, «Հաշակել» Գորկուն կուսակցությունից վտարելու լուրերը, կենինը զայրույթով պատասխանեց. «Իզուր են ճիգ թափում բուրժուական թերթերը: Ընկեր Գորկին գեղարվեստական մեծ յերկերով իրեն շտա ամուր և կապել Ռուսաստանի և ամբողջ աշխարհի բանվորական շարժման հետ, վորպեսզի, արհամարհանքից բացի, այլ կերպ պատասխանի նրանց»¹: Գորկու հետ ունեցած իդեոլոգիական ամենից ավելի սուր տարածայնությունների ժամանակ, կենինը առանց տառանվելու, գրում եր. «...Գորկին անպայման պրոլետարիան արվեստի խոշորագույն ներկայացուցիչն ե, վորը շատ բան և արել նրա համար և ել ավելի շատ կարող և անել»²:

Սրանից չի հետեւում, թե կենինը լուսթյան եր մատնում Գորկու քաղաքական սխալները նրա «վպերյոդական» հեռացման շրջանում: Խոսելով նրա այն ժամանակվա բաց նամակներից մեկի մտախն, կենինը հայտարարում ե. «Իմ հայցքով Գորկու նամակն արտահայտում ե վոչ միայն բուրժուազիայի, այլև նրա ազգեցության տակ գտնվող բանվորների մի մասի չափազանց տարածված նախապաշարումները: Մեր կուսակցության բոլոր ուժերը, գիտակից բանվորների բոլոր ջանքերը պետք ե ուղղել համառ, հետեւգողական, հանքակողմանի պայքար մղելու արդ նախապաշարումների դեմ: Շատ հետաքրքիր, և կենինի համար անառվոր լիրիկականությամբ, վորը ցույց ե տալիս, թե ինչքան թանգ եր նրա համար Գորկին, նա գրում ե, իմանալով ժամանակավոր կառավարությանը Գորկու ուղղած վողջույնի փաստի մասին. «Մասն զգացում ես ապրում, կարդալով ամբողջապես քաղքենիական գնայուն նախապաշարումներով տոգորված այս նամակը: Տողերիս գրողն առիթ ե ունեցել, կապրի կղզու Գորկու հետ ունեցած տեսակցությունների ժամանակ, նախազգուշացնել նրան և կղտամբել նրա քաղաքական սխալների համար: Գորկին պաշտպանվում եր այդ կշտամբանքներից իր աննմանամբելի ժպիտով և պարզասիրտ արտահայտությամբ. «Թես գիտեմ, վոր վատ մարքսիստ եւ: Ցեկ հետո՝ մենք՝ գեղարվեստագետներս մի քիչ անմեղսագրելի մարդիկ ենք»: Հեշտ չե վիճել զրա դեմ: Տարակոյս չկա, վոր Գորկին վիթխարի գեղարվեստական տաղանդ ե, վորը շատ ոգուա և բերել և կրերի համաշխարհային պրոլետա-

¹ ЛЕНИН, «Басня буржуазной печати об исключении Горького», том XIV, стр. 211.

² ЛЕНИН, «Заметки публициста», т. XIV, стр. 203.

գրական շարժմանը: Բայց Գորկու ի՞նչ պետքն ե ձեռք զսրկել քաղաքականությանը³:

Ի հարկե հիմարություն կլինի կենինի այս գիտողությունից անեկ այն յեղակացությունը, թե իրոք վորոշանմեղսաղբեկությունը գեղարվեստագետի տնիուսափելիք գիծն և հանդիսանուած և թե գեղարվեստագետն իր ինչ-վար ներքին եյությամբ անպայման վատ քաղաքացետ ե: Գորկու նկատմամբ այդպիսի սխալ տեսակետի վրա յեն կանգնել դ. Վ. Պեխանովը և զգալի չափով նաև Վ. Վ. Վորովսկին: Ընդհակառակը, կենինը գեղարվեստագետի մեջ գնահատում եր ամուր, հստակ միտքը. իզուր չեք, վոր նա այնքան բարձր տեղ եր տալիս: Զերնիշիվսկու և Ի՞նչ անելք վեպին: Գորկու հանդեպ կենինի ունեցած վերաբերմունքից, ինչպես գեղարվեստագետների հանգեց Մարգսի և ենգելսի ունեցած վիրաբերմունքից, կարելի յե, սակայն բղխեցնել այն յեղակացությունը, վոր անհրաժեշտ ե վորոշ ներողամտություն ունենալ, վորոշ չափով կարողանալ ներել գեղարվեստագետի առանձին անշշտությունները, անպարզությունները, իդեոլոգիական վիժուաները, յեթե այդ ամենը լրացվում ե տաղանդով և վոր գլխավորն ե—գեղարվեստագետի բոցավառ ցանկությամբ՝ ծառայելու հեղափոխության գործին:

Հ. ԱԵՆԻՆԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀՈՒՐՁԸ.

Վորն եր Վլագիմիր Իլյիչի գրական հաշակը: Այդ առթիվ կենինի վերաբերյալ մի շարք մեմուարների մեջ պահպանվել են հետաքրքիր վկայություններ, վոր վերաբերում են կենինի՝ աքանորում յեղած ժամանակին:

«Եթերեկոնները,—գրում ե, որինակ, Ն. Կ. Կրուպսկայան,— Վլագիմիր Իլյիշը սովորաբար կարդում եր կամ վիլիսովիայական գրքեր—Հեղելից, Կանտից, Փրանսիական մատերիալիստներից,— կամ, յերբ շատ եր հոգնում, Պուշկին, Լերմոնովի, Նեկրասովի: Եթեր Վլագիմիր Իլյիչն առաջին անգամ եր յերեվացել Պիտերում, և յես նրան գիտեյի պատմածով միայն, Ստեղան Բվանովիչ Թաղչենկոյից լսել եյի, վոր Վլագիմիր Իլյիչը միայն լուրջ գրքեր ե կարգում, իր կյանքում վոչ մի վեպ չի կարգացել: Եթո զարմացած եյի. հետո, յերբ յես մոտիկից ծանոթացա Վլագիմիր Իլյիչի հետ, չգիտես ինչպես վոչ մի անգամ այդ մասին խոսակցություն չունեցանք, և Սիբիրում միայն իմացա, վոր այդ ամենը զուտ առասպել ե: Վլագիմիր Իլյիչը վոչ միայն կարգացել, այլև

³ ЛЕНИН, «Письма из далека», т. XX, стр. 14.

շատ անգամ վերընթերցիլ եր Տուրքենեվին, Է. Տուստոյին, Չեր-
նիչեվսկու «Ի՞նչ անհյուր, ընդհանրապես հիանալի զի տեր և սի-
րում եր կլասիկներին. Հետո, յերբ բոլշևիկներն իշխանության-
գլուխն անցան, նա Պետրատին խնդիր առաջարկեց՝ հժանակին
հատորներով վերաբառարակել կլասիկներին, Վլադիմիր Իլլիչ-
ալլրումում, ազգականների և հին աքսորականների լուսանկարնե-
րից բացի, կային Զոլայի, Թերցենի լուսանկարները և Զերնիշեվս-
կու մի քանի լուսանկարները»¹.

Իր հիշողությունների մեջ մի այլ տեղ նա առում ե, ա... Սի-
րիում յես իմացա, վոր իլլիչն ինձնից քիչ չեր կարդացել կլա-
սիկներին, վոչ միայն կարդացել, այլև քանիցս վերընթերցել եր,
որինակ, Տուրքենեվին: Յես ինձ հետ Սիրիու եյի բերել Պուշկի-
նի, Լերմոնտովի, Նեկրասովի գործերը: Վլադիմիր Իլլիչը դրանք
դրել եր մահճակալի մոտ, չեղելի կողքին, և յերեկոները նորից
ու նորից վերընթերցում եր, Ամենից շատ սիրում եր Պուշկինին-
Բայց միայն ձեզ չեր, վոր գնահատում եր նա: Արինակ, նա սի-
րում եր Զերնիշեվսկու «Ի՞նչ անել» վեպը, չնայած նրա քիչ գե-
ղարփեսական, նայիկ ձեին: Յես զարմացած եյի, ի՞նչպիսի ու-
շադրությամբ եր նա կարգում այդ վեպը և ինչպիսի ամենա-
նուրը գծեր, վոր կան այդ վեպում, նշում եր: Սակայն նա սի-
րում եր Զերնիշեվսկու ամբողջ գեսքը, և նրա Սիրիույան ալբո-
մում կար չերկու լուսանկար այդ գրողից, վորոնցից սիկի վրա-
իլլիչն իր ձեռքով մակագրել եր ծննդյան և մահվան տարին: Իլ-
լիչի ալրումում կային նաև եմիլ Զոլայի, իսկ ուսներից՝ Գերցե-
նի և Պիսարեվի լուսանկարները: Պիսարեվին Վլադիմիր Իլլիչն իր
ժամանակ շատ եր կարդացել և սիրում եր: Հիշում եմ, Սիրիում
կար նաև Գյոթեյի «Ֆառաւու»-ը գերմաներեն լեզվով և մի հա-
տոր Հայնեյի բանաստեղծություններից»²:

Լենինը հատկապես գնահատում եր հաստատուն սոցիալա-
կան ռեալիզմը, վորը հաստրակական յերեւյթների գեղարվեստու-
րեն խտացած պատկերացումն և տալիս նրանց տիպականորեն
արտահայտիչ որինակների միջոցով: Այսպես, ընկ. Կրուպսկայան
գրում ե. «Սիրիուց վերադառնալով, Մուկվայում Վլադիմիր Իլլի-
չը մի անգամ գնաց թատրոն, դիմեց «Կատապան Գենշելը», հե-
տո ասաց, թե իրեն շատ գուր յեկավ: Մյունիսնում Վլադիմիր
Իլլիչն գուր յեկած գրքերից հիշում եմ Գերմարդտի «Բեյ տամա»-
«Մայրիկի մոտ») վեպը, Պունցի «Büttnergevauer» («Գյուղացի-
ներ»-ը»)³:

¹ Воспоминания о Ленине, ГИЗ, Москва—Ленинград, 1931, стр. 32-33.

² Նույն աեղում էջ 187-188.

³ Նույն աեղում, էջ՝ 188.

Բայց մոնումենտալ սիմվոլիզմն ել, վորը նույն սոցիալա-
կան իրականությունը գեղարվեստական խտացման միջոցով բարձ-
րացնում ե սինչեւ ընդհանրացնող բյուրեղացումը, համարյա, կա-
քելի յի ասել, մինչեւ գեղարվեստական աբստրակցիան, ոտար չեր
լենինին: Այսպես, ընկ. Կրուպսկայան վկայում ե, վոր Լենինն ան-
քուն դիշերները վերհարն եր կարդում: Դրան ե վերաբերում նա-
և, իմ կարծիքով, այն փաստը, վոր ընկնելով Տուստոյի «Կեն-
դանի դիակու-ի գերմաներեն և բավական թույլ ներկայացմանը,
ԽԱՀԸԸ, ընկ. Կրուպսկայայի վկայությամբ, «Լարված ու հողված-
հետևում եր խաղին: Արդեն հիվանդ՝ լենինն առանձին բավա-
կանությամբ եր լուս Զեկ Լոնդոնի պատմվածքները, յերբ նը-
րանք լիցուն եյին իսկական պաթոսով, և ծիծագում եր նրանց
վրա, յերբ նրանց մեջ դրսելորվում եր կեղծ, քաղքենիական սեն-
տիսենատալիզմը»:

Լենինը շատ հաճախ և չափազանց հաջող կերպով լուսաբա-
նում եր իր հողվածներն ու ճառերը զանազան զրոյներից վերց-
ված քաղվածներով և որինակներով: Առանձին սիրով և նա-
մեջբերումներ կատարում Շեգրինից, բայց նաև Գոգոլից, Գոն-
չարովից, Տուստոյից, Տուրքենեվից, Պոմյալովսկուց, Կորոլենկո-
յից, Զելյովից, նույնիսկ Անդրենից և վերջապես, Մայակովս-
կուց:

Մայակովսկու մաներան լենինը չեր սիրում: Նրան ընդհան-
րապես զգվանք եյին պատճառում ամեն տեսակ ու լուրածամա-
նակակից վորոնումների լարվածությունը, անբնականությու-
